



Խաղաղաշինական կրթություն

«Հասարակագիտություն» առարկայի
ուսուցչի ուսումնառական ծեռնարկ





Խաղաղաշինական կրթություն

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցչի
ուսումնառական ծեռնարկ

Այս ծեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Սահմանափակ երիտասարդների ներուժի բացահայտում» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ներածություն



խաղաղություն կառուցելը բարդ և երկարատև նախաձեռնություն է: Գոյություն ունեն խաղաղության կառուցման տարբեր պատկերացումներ ու կանխավարկածներ, որոնք խաղաղաշինությունը՝ որպես երևույթ և գաղափարախոսություն սահմանում են տարբեր կերպ: Խաղաղության կառուցման անբաժան մասն է կազմում խաղաղության կամ խաղաղաշինության վերաբերյալ կրթությունը: Խաղաղության կրթության առաքելությունն է նպաստել հարատև և կայուն խաղաղության հաստատմանը:

Խաղաղաշինական կրթության նպատակն է սովորեցնել, թե ինչպես լուծել կոնֆլիկտն (հակամարտություն) առանց բռնության, հարգել կյանքի և իրավունքների բոլոր ձևերը և ներգրավվել խաղաղության կառուցման մեջ քաղաքացիական գործունեությամբ: Այն նաև օգնում է սովորողներին գնահատել միջմշակութային բազմազանությունը, յուրացնել խաղաղ մասնակցության հմտություններ և պատկերացնել ապագան առանց պատերազմի:

Սույն ձեռնարկի նպատակն է աջակցել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչներին՝ տրամադրելով խաղաղաշինական կրթության վերաբերյալ տեսական և գործնական ուսումնառական նյութ:

Ձեռնարկը երաշխավորված է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:



Բովանդակություն



● Ներածություն	2
● Մաս 1	
1.1 Կոնֆլիկտ. կոնֆլիկտի տեսակներ, պատճառներ և կոնֆլիկտի հաղթահարում	7
1.2 Խաղաղ կամ ոչ բռնի հաղորդակցում	15
1.3 Խաղաղություն և խաղաղաշինություն	21
● Մաս 2	
2.1 Մարդ և իրավունք.....	39
2.2 Մարդու իրավունքներն ու խաղաղաշինություն	46
2.3 Ժողովրդավարություն ու խաղաղություն	55
● Մաս 3	
3.1 Քաղաքականությունը՝ որպես խաղաղաշինության գործիք	83
3.2 Պետություն և պետական քաղաքականություն	88
3.3 Պետություն և մշակույթ	93
● Հետգրություն	108



1 nm



ԹԵՄԱ 1.1

Կոնֆլիկտ.

Կոնֆլիկտի տեսակներ, պատճառներ
և կոնֆլիկտի հաղթահարում



Նպատակ

Բացատրել կոնֆլիկտ հասկացությունը, ներկայացնել կոնֆլիկտի պատճառները, կոնֆլիկտի տեսակներն ու հաղթահարման մեթոդները:

«Կոնֆլիկտ» տերմինը գալիս է լատիներեն «conflictus» (բախում) բառից: Կոնֆլիկտն այն իրավիճակն է, որի ժամանակ մի կողմի (անձ, խումբ, կոլեկտիվ) վարքը խոչընդոտում է մյուս կողմի շահերի իրականացմանը:

Կոնֆլիկտների խնդրին անդրադարձել են շատ գիտնականներ, փիլիսոփաներ և հետազոտողներ: Օրինակ, ֆրանսիացի սոցիոլոգ Բենատ Գուրնեյը գրում է. «Մենք բոլորս ցանկանում ենք խուսափել կոնֆլիկտներից, բայց դա անհեթեթ երազանք է»:

Իսկ Հենրի Ֆորդը ասում է. «Եթե սովորենք՝ ինչպես լուծել կոնֆլիկտները, ապա դա մեզ թույլ կտա նվազեցնել ավտոմեքենայի ինքնարժեքը ավելի, քան տեխնիկական նորամուծությունը 25 տարվա ընթացքում»: Հոգեբանները կոնֆլիկտը դիտարկում են որպես մարդկանց փոխազդեցության բնական պայման, որի հիմքում ընկած են հակասություններ, արժեքների և հետաքրքրությունների միջև տարբերություններ: Նրանք պնդում են, որ կոնֆլիկտը նշանակում է համաձայնության բացակայություն, տարակարծություն, տարբեր հայացքների և ցանկությունների բախում:

Սոցիոլոգները, որոնք առանձնացնում են սոցիալական հարաբերությունները, ավելի հակված են կոնֆլիկտը բնութագրել որպես հակասությունների որոշակի սրում, բախում, որոնք առաջանում են անհամատեղելի հետաքրքրություններից և անհատական դիրքորոշումից, հակադիր սոցիալական խմբերից, խավերից, ազգությունից, պետություններից:

Կառավարման խնդիրներն ուսումնասիրող մասնագետները հաճախ սահմանում են կոնֆլիկտը որպես բարդ համակարգային փոխհարաբերություն, հակասություն երկու կամ ավելի կողմերի միջև, որտեղ առկա է հաղորդակցման խեղաթյուրում կամ բացակայություն: Այն կարող է տեղի ունենալ առանձին անհատների, խմբերի, ինչպես նաև համայնքների միջև:

Իսկ Վեսնինը իր կադրային աշխատանքի ձեռնարկում կոնֆլիկտը բնութագրում է որպես «մարդկանց և նրանց ֆորմալ ու ոչ ֆորմալ միավորումների փոխհարաբերություններում բախում, որը պայմանավորված է տեսակետների, դիրքորոշումների և շահերի տարբերություններով»:

Ամփոփելով կոնֆլիկտի մասին վերոնշյալ մոտեցումները՝ կառավարչական գիտության և կոնֆլիկտաբանության կիրառական կարևորության համար առավել ընդունելի կլինի հետևյալը. **Կոնֆլիկտը** մարդկանց միջև հարաբերությունների և սոցիալական կապի դրսևորում է, անհամատեղելի տեսակետների, դիրքորոշումների և շահերի բախման ժամանակ փոխգործակցության ձև, երկու կամ ավելի նպատակների առճակատում:



Խմբերում, կոնֆլիկտի դրական և բացասական կողմերը լավագույնս պատկերացնելու համար, կարելի է կիրառել «Կլոր շրջան քննարկում» մեթոդը: (մանրամասն նկարագրությունը տես՝ «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Կոնֆլիկտի Էության ժամանակակից մոտեցումը դիտում է կոնֆլիկտը որպես որևէ խմբի գործունեության անխուսափելի, որոշ դեպքերում նույնիսկ անհրաժեշտ տարր: Շատ իրավիճակներում կոնֆլիկտը օգնում է բացահայտել տարբեր տեսանկյուններ, լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրում, օգնում է ավելի շատ այլընտրանքներ կամ լուծումներ գտնել: Սա ստիպում է խմբի որոշումների կայացման գործընթացն առավել արդյունավետ դարձնել, ինչպես նաև հնարավորություն է տալիս մարդկանց արտահայտել իրենց մտքերը, բավարարել իրենց անձնական պահանջմունքները հարգանքի և իշխանության համար: Դա կարող է հանգեցնել նաև պլանների, ռազմավարությունների և նախագծերի առավել արդյունավետ իրականացմանը:¹ Հետևաբար, կոնֆլիկտը կարող է ստանալ դրական կամ բացասական եզրահանգում:

Կոնֆլիկտի տեսակներն են՝ ներանձնային, միջանձնային, անհատի և խմբի միջև, միջխմբային, միջազգային:²

Ներանձնային կոնֆլիկտը ընթանում է հենց ներհոգեկան ոլորտում, ունի բացառապես հոգեկան, հոգեբանական բնույթ: Արտաքին կոնֆլիկտի ժամանակ մարդը գործ ունի արտաքին աշխարհի խոչընդոտող հանգամանքների հետ: Իսկ ներանձնային կոնֆլիկտի ժամանակ հակամարտությունը գնում է ոչ թե մարդու և արտաքին աշխարհի միջև, այլ մարդու մեջ:

Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է երկու մարդու միջև, հատկապես երբ հարաբերության մի կողմը կամ երկու կողմերն էլ չեն տեսնում կամ պատրաստակամ չեն տեսնել ու հարգել դիմացինի կարիքները:

Անհատի և խմբի միջև կոնֆլիկտն առավել հաճախ առաջանում է

այն ժամանակ, երբ անհատն ունենում է խմբի դիրքորոշումից տարբեր շահեր և դիրքորոշում: Կոնֆլիկտի այս ձևը պայմանավորված է նաև անձի և խմբի ակնկալիքների տարբերությամբ: Օրինակ՝ խմբի և ղեկավարի միջև կարող է նման կոնֆլիկտ առաջանալ, եթե ղեկավարը, պաշտոնական պարտականություններից ելնելով, այնպիսի գործողությունների կատարի, որոնք խմբի համար անընդունելի կլինեն:³ Այս տեսակ կոնֆլիկտի օրինակ են մարդ-պետություն հարաբերություններում մարդու իրավունքների խախտման դեպքերը, որոնց մասին առավել մանրամասն կուսումնասիրենք ձեռնարկի հաջորդ գլուխներում:

Միջխմբային կոնֆլիկտն առաջանում է, երբ ձևավորվում են երկու տարբեր խմբեր, որոնք ունեն տարբեր նպատակներ, համոզմունքներ և կարիքներ: Երբ երկու կողմերը պատրաստ չեն քննարկել միմյանց միջև գոյություն ունեցող տարբերությունները, լսել միմյանց, հասկանալ մեկը մյուսի տեսակետն ու կարիքները, կարեկցել, նման պարագայում կոնֆլիկտն ավելի է սրվում և զարգանում:

Միջազգային կոնֆլիկտն առաջանում է տարբեր տերությունների միջև՝ հիմնվելով տարբեր քաղաքական, պետական, տարածքային և այլ շահերի վրա:

Տարբեր ընկալումները շատ հաճախ կոնֆլիկտի պատճառ են դառնում: Ուստի, կոնֆլիկտներն առաջանում են ոչ թե օբյեկտիվ հանգամանքների դրսևորման, այլ մարդկանց կողմից դրանց ոչ ճիշտ, սուբյեկտիվ ընկալման և գնահատման հետևանքով:

Շատ դեպքերում, կոնֆլիկտի պատճառ է հանդիսանում ոչ խոսքային հաղորդակցման ընկալումը, երբ մեկ ժեստը կամ մարմնի լեզուն տեղեկություն ստացողը հասկանում է ըստ իր տեսանկյան, ինչն էլ համապատասխանաբար չմեկնաբանվելու պարագայում կարող է թվալ վիրավորական և կոնֆլիկտի պատճառ հանդիսանալ:

Կոնֆլիկտի պատճառ է հանդիսանում հաղորդակցման բացակայությունը. երբ երկու կողմերը դադարում են շփվել և միմյանց ճանա-

3. Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան; Բանքեր: <https://brusov.am/website/documentation/files/5444ea54.pdf>

չել: Ինչպես տեսանք վերևում, հաղորդակցությունը տեղի է ունենում տեղեկություն փոխանցողի և ստացողի միջև, ինչն էլ ապահովում է կապ և շփում կողմերի միջև, որն էլ իր հերթին նպաստում է կողմերի բացահայտմանը, ճանաչմանը, փոխվստահության սահմանմանն ու հարաբերության զարգացմանը:

Երբ երկու մարդկանց կամ խմբի, ազգերի միջև հաղորդակցումը տևական ժամանակ բացակայում է, ապա այդ բացակայությունը կարող է ստեղծել տարբեր տեսակի վախեր, կարծրատիպեր և ատելություն: Հատկապես, եթե կան նպաստավոր պայմաններ այդ ատելությունը զարգացնելու համար, ապա հաղորդակցման բացակայությունը կարող է վերածվել թշնամանքի:




Կոնֆլիկտի պատճառներն ու հետևանքները վերլուծելու և ավելի լավ պատկերացնելու համար, կարելի է կիրառել «Կոնֆլիկտի ծառ» մեթոդը: (մանրամասն նկարագրությունը տես՝ «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Թշնամանքից և ատելությունից խուսափելու համար անհրաժեշտ է վերականգնել հաղորդակցումը կողմերի միջև, ապահովել վստահության մթնոլորտ և նպաստել հարաբերությունների վերակառուցմանն ու զարգացմանը:⁴

Առաջին հերթին կարևոր է փորձել հաղթահարել կոնֆլիկտը: Գոյություն ունի կոնֆլիկտը հաղթահարելու հինգ լուծում՝ **խուսափում, փոխգիշում, մրցակցություն, համագործակցություն, հարմարվողականություն**:⁵

Նրանք, ովքեր խուսափում են կոնֆլիկտից, հակված են լինել անվստահ և չհամագործակցող, մինչդեռ դիվանագիտորեն ջրջանցում են խնդիրը կամ պարզապես հեռանում են սպառնացող իրավիճակից: Այս տեսակը հիմնականում կիրառվում է այն պարագայում, երբ արդյունքն ու նպատակը կարևոր չեն:



Հոգ

(նպատակի
կարևորություն)

● Մրցակցություն

● Համագործակցություն


● Փոխզիջում

● Խուսափում

● Հարմարվողականություն

համագործակցություն

(հարաբերությունների կարևորություն)



Մրցակցությունն անհատների կամ խմբերի միջև պայքար է, որի նպատակն է լինել ամենաարագն ու ուժեղը, ամեն գնով հաղթել հակառակորդին: Նրանք, ովքեր մրցակցում են, հաստատակամ են և չհամագործակցող, պատրաստ են հետամուտ լինել սեփական մտահոգություններին: Կոնֆլիկտի լուծման այս եղանակի արդյունքում կողմերից մեկը ոչնչացնում է մյուսին, կամ երկուսն էլ ոչնչացնում են մեկը մյուսին: Մրցակցության դեպքում հարաբերությունների պահպանումն ու կառուցումը կարևոր չէ. առաջնային է արդյունքը: Կոնֆլիկտի այս տեսակը հատուկ է սպորտին, արդյունքում սահմանվում է մեկ հաղթող և մեկ պարտվող: Հարմարվողականությունը իր մեջ ներառում է անձնագոհության տարր, երբ կողմերից մեկը համակերպվում է դիմացինին՝ շահերը, նպատակները կամ կարիքները բավարարելու համար: Հետևաբար, հարմարվող կողմը չի ներկայացնում իր իրական ցանկություններն ու կարիքները: Հարմարվողականության եղանակը կիրառելի է, երբ արդյունքն ու նպատակը առաջնահերթ չեն,

բայց շատ կարևոր է պահպանել կամ կառուցել հարաբերությունը: Կոնֆլիկտի փոխզիջում եղանակը նպատակ ունի գտնելու նպատակահարմար, փոխադարձ ընդունելի լուծում, որը մասամբ կբավարարի հակամարտող երկու կողմերին՝ պահպանելով որոշակի ինքնավստահություն և համագործակցություն: Կոնֆլիկտի լուծման այս եղանակի արդյունքում կողմերը գոհ չեն մնում, քանի որ չեն հասնում լիարժեք արդյունքի, սակայն որոշակիորեն պահպանում են հարաբերությունները: Համագործակցությունը ուրիշի հետ աշխատելու գործընթաց է՝ ինչ-որ բան արտադրելու կամ ստեղծելու համար: Այն հոգատար և կարեկից լինելու համադրությունն է: Նրանք, ովքեր համագործակցում են, փորձում են աշխատել ուրիշների հետ՝ գտնելու լուծում, որը լիովին բավարարում է բոլորի մտահոգությունները: Այս պարագայում երկու կողմերն էլ կարող են ստանալ այն, ինչ իսկապես ցանկանում են: Համագործակցության պարագայում երկու կողմերն էլ հաղթում են և զարգանում:

Միասին աշխատելն ու համագործակցության ձգտելը ստեղծում են հաղթող-հաղթող սցենար: Կան միաժամանակ երկու հաղթողներ, ի տարբերություն մրցակցության՝ հաղթող-պարտվող սցենարի: Հաղթող-հաղթող սցենարը համագործակցության անբաժանելի մասն է: Հատկապես աշխատավայրում համագործակցությունը թույլ է տալիս թիմում գտնվող մարդկանց լինել ճկուն, մտածել ուրիշների գաղափարների մասին լավագույն լույսի ներքո: Այսպիսով, համագործակցությունն ամենալավն է աշխատում, երբ երկարաժամկետ հարաբերություններն ու արդյունքը կարևոր են, երբ հավասարապես կարևորվում են դիմացինի կարիքներն ու ցանկությունները:⁶



Կոնֆլիկտի լուծման 5 եղանակները ուսումնասիրելու համար կարելի է կիրառել «Աշխարհի սրճարան» մեթոդը (մանրամասն նկարագրությունը տես՝ «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Համագործակցության դերն ավելի լավ պատկերացնելու համար, ու-

6. Գրեյթի; Կոնֆլիկտը լուծելու եղանակները; <https://www.familyconsumersciences.com/2018/10/styles-for-handling-conflict-lesson-activities/>

սումասսիրեք այն մրցակցության հետ համեմատության մեջ: Մինչ եկթաթեմայի տեսական մասը ներկայացնելը կարող եք կիրառել **«Թղթերով խաղ» վարժությունը** (մանրամասն նկարագրությունը տե՛ս «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Կապ ստեղծելով վարժության և քննարկման արդյունքի հետ՝ ներկայացրեք եկթաթեմայի տեսական հատվածը:

Վիսսենթ Լոմբարդին ասում է. «Հաղթելն ամեն ինչ չէ, բայց հաղթելու կամքն ամեն ինչ է»:⁷

7. Լորի Փեթերսոն; Ուժեղ գործիք. մրցակցություն և համագործակցություն; <https://coachcampus.com/coach-portfolios/power-tools/lori-peterson-competition-vs-collaboration/>

ԹԵՄԱ 1.2

Խաղաղ կամ ոչ բռնի հաղորդակցում



Նպատակ

Ցույց տալ հուզական բանականության և հաղորդակցման կարևորությունը կոնֆլիկտների պատճառները վեր հանելու, խաղաղ լուծում գտնելու և կայուն խաղաղության հասնելու համար:

Հուզական բանականությունը սեփական, ինչպես նաև այլ մարդկանց հույզերը, ապրումները, ցանկությունները հասկանալու, ճանաչելու, նրանց ապրումակցելու և համապատասխանորեն արձագանքելու կարողությունն է, որն ուղղված է մարդկանց մոտիվացմանը, համագործակցությանն ու առաջադրված նպատակների արդյունավետ իրականացմանը:

Եկթադրվում է, որ հենց հուզական բանականությունն է եղել մարդու գոյության առանցքը մինչպատմական ժամանակաշրջանում, քանի որ այն արտահայտվում է մարդու՝ շրջակա միջավայրին հարմարվելու, գոյատևելու և ցեղակիցների ու հարևան ցեղերի հետ ընդ-

հանուր լեզու գտնելու մեջ: Այդ ոլորտին է 1872 թվականին անդրադարձել Չարլզ Դարվինն իր «Մարդկանց և կենդանիների մոտ զգացմունքների արտահայտումը» աշխատության մեջ, որտեղ նա գրել է գոյատևման և հարմարվողականության մեջ զգացմունքների արտաքին արտահայտումների դերի մասին:⁸

Հուզական բանականությունը մեծ դեր է խաղում առաջնորդության հարցում: Հուզական բանականության հինգ հիմնական տարրերն են.

- Ինքնաճանաչումը ինքներդ Ձեզ ճանաչելու, Ձեր հույզերը ճշգրիտ հասկանալու ունակությունն է: Ինքնակարգավորումը այդ հույզերն իմաստավորելու և դրանք ղեկավարելու ունակությունն է՝ պայմանավորված իրավիճակով
- Ապրումակցումը կամ Էմպատիան, որը ցույց է տալիս, թե որքանով եք Դուք ի վիճակի ճանաչել և հասկանալ ուրիշների հույզերը:
- **Մոտիվացիան**, իսկ ավելի ճիշտ՝ ներքին մղումը, որը ներառում է գործից բավականություն ստանալու ցանկությունը, նպատակասլացություն, շահագրգռվածությունը՝ կատարելու ինքդ քո առջև դրված առաջադրանքը՝ անկախ նյութական պարգևատրումից:
- **Հաղորդակցումը**, որոնք թույլ են տալիս արդյունավետ կերպով արտահայտել Ձեր ներքին ցանկությունը, զգացումները և Ձեր մտքերը սեփական անձի, Ձեր և այլոց հույզերի, ինչպես նաև այլ թեմաների վերաբերյալ:

Հուզական բանականության զարգացումը կարող է Էապես խթանել արդյունավետ որոշումների կայացումը, մասնագիտական և ոչ մասնագիտական խնդիրների լուծումը, գործնական առաջադրանքների արագ և արդյունավետ կատարումը և առաջադրված նպատակներին հասնելու համար համարժեք միջոցների ու մարտավարությունների կիրառումը:


8. Дарвин Ч.; О выражении эмоций у человека и животных; <http://vivovoco.astronet.ru/VV/PAPERS/BIO/DARWIN/EMOTIONS/EMOTIONS.HTM>

Չարգացնելով սեփական հուզական բանականությունը՝ հնարավոր է նվազեցնել սթրեսային իրավիճակներն աշխատավայրում մասնագիտական հաղորդակցման ժամանակ:

Հետևաբար, մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու կարևոր ունակություններից է զարգացած հուզական բանականությունը:

Հաղորդակցումը ուղերձի կամ հաղորդագրության բովանդակությունը կամ իմաստը կազմելու, հաղորդելու և փոխանցելու երկկողմանի գործընթաց է, որի միջոցով կողմերի միջև կապ է հաստատվում: Այն կարող է իրականանալ անձանց կամ խմբերի միջև՝ օգտագործելով տարբեր միջոցներ՝ խոսքային կամ ոչ խոսքային: Հաղորդակցումը տեղի է ունենում, եթե կան իմաստը կամ հաղորդակցման միավորը (հաղորդագրություն, ուղերձ), հաղորդողը և դրա ընդունող(ներ)ը: Տեղեկություն հաղորդողը տեղեկությունն ուղարկող սկզբնակետն է կամ սկզբնաղբյուրը, որը ձևակերպում կամ ծածկագրում է տեղեկությունը, այնուհետև համապատասխան հաղորդակցման ուղիներով ապահովում է տեղեկության ապակոդավորումը կամ ընկալումը: Վերջինս ուղղված է տեղեկությունը ստացողին, ով ըստ տեղեկատվության իր ընկալման՝ պատասխան է տալիս հետադարձ կապի միջոցով: Հետադարձ կապն ուղղվում է տեղեկատվության սկզբնաղբյուրին, այսինքն՝ տեղեկությունն ուղարկողին: Հաղորդակցման այդ գործընթացը կարող է շրջափուլային բնույթ ունենալ: Տեղեկություն հաղորդողն ընտրում է հաղորդվող միտքը, գաղափարը, ձևակերպում է այն (ծածկագրում է) խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ, հաղորդում է ստացողին: Ստացողն ապածածկագրում է ստացված տեղեկությունը և այս կամ այն կերպ իմաստավորում է այն: Իր հերթին նա ընտրում է պատասխան տեղեկությունը, ձևակերպում, ծածկագրում խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ և պատասխանում է:

Հաճախ հաղորդակցման գործընթացին խանգարում են մի շարք խոչընդոտներ, որոնց անվանում ենք «աղմուկ»: Աղմուկը կարող է աղճատել տեղեկության փոխանցման և ընկալման գործընթացները, օրինակ՝ ընկալման սխալներով, ինչպիսիք են մարդու կարծրատիպերը, տրամադրությունը կամ ընտրողական ընկալումը:



Ընկալման աղճատումն առաջանում է, երբ ընկալման վրա ազդում է ընկալողի մշակույթը, ազգությունը, մասնագիտությունը, նախկին փորձը, սպասումները, վերաբերմունքը, հետաքրքրությունները, հոգեվիճակն ու հուզական ֆոնը:

Իրականության, մարդկանց և երևույթների վերաբերյալ տպավորության ձևավորման վրա ազդում են մեր զգայարանները և պատկերացումները, որոնք այս կամ այն իմաստն են հաղորդում ընկալվող նյութին:⁹



Իրականության տարբեր ընկալումների և հաղորդակցման դերը ցույց տալու համար կարելի է կիրառել «Ժեստերով խաղ» վարժությունը (մանրամասն նկարագրությունը տե՛ս «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Կոնֆլիկտի խաղաղ լուծմանը հնարավոր է հասնել **բանակցելու և ոչ բռնի հաղորդակցում** կիրառելու շնորհիվ:

Բանակցությունը ռազմավարական քննարկում է, որը լուծում է հարցն այնպես, որ երկու կողմերն էլ գտնեն ընդունելի տարբերակ:

Բանակցության ընթացքում, կողմերը ներկայացնում են իրենց դիրքորոշումն ու տեսակետը, կարծիք են փոխանակում, երկխոսում են, ներկայացնում են իրենց կարիքները և փորձում իրապես լսել և հասկանալ միմյանց, ինչի շնորհիվ ձեռք են բերում համարժեք լուծում:¹⁰ Բանակցությունը շատ բարդ և ժամանակատար գործընթաց է, քանի որ յուրաքանչյուր կողմ փորձում է բացատրել մյուսին իր տեսակետը և համոզել համաձայնել:

Բանակցություններ վարելով՝ բոլոր ներգրավված կողմերը փորձում են խուսափել վիճաբանությունից, սակայն համաձայնում են հասնել փոխզիջման ինչ-որ ձևի: Որքան էլ բարդ է, բանակցելը բավական արժեքավոր է բարոյական տեսանկյունից:



Խմբերում բանակցության դերը ներկայացնելու համար, կարելի է կիրառել «Նարնջի պատմություն» իրավիճակի վերլուծության մեթոդը (մանրամասն նկարագրությունը տե՛ս «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Շատ հարաբերություններ վատանում են, քանի որ մենք չգիտենք, թե ինչպես շփվել: Նմանապես, վատ հաղորդակցությունը զգալի հակասություն է առաջացնում: Մենք հավատում ենք, որ խոսելը նույնն է, ինչ շփվելը և մոռանում ենք մյուս, հիմնարար մասը՝ լսելը: Այս խնդրի լուծման **համար ամերիկացի հոգեբան և հեղինակ Մարշալ Ռոզենբերգը 1960թ.** առաջարկել է Ոչ բռնի հաղորդակցման տեսությունը:¹¹

Ոչ բռնի հաղորդակցումը դիմացինին հասկանալու, ապրումակցելու և հոգատար լինելու մեթոդ է: Ոչ բռնի հաղորդակցումը կարող է փոխակերպել երկխոսությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս մարդկանց ավելի իրազեկ լինել տվյալ իրավիճակում իրենց զգացմունքներին, կարիքներին և ցանկություններին, ինչպես նաև զգալ ուրիշների զգացածը:

Ոչ բռնի հաղորդակցման կիրառումը նպաստում է բանակցության արդյունավետ իրականացմանը:

Հաղորդակցության այս ձևը կարող է նպաստել ավելի մեծ ինքնագիտակցության և անձնական աճի, խթանել միջանձնային ավելի խորը հարաբերություններ և արդյունավետորեն կարգավորել հակամարտություններն ու վեճերը հասարակության բոլոր մակարդակներում: Ըստ վերջինիս՝ մարդու բնույթն է կարեկցաբար վարվելը, բայց մեզանից շատերը սովորել են խոսել և գործել ուրիշների համար վնասակար ձևերով: Մենք սովորում ենք դատել, հետ քաշվել, պաշտպանվել և հարձակվել, որոնք մեզ հեռացնում են ուրիշներից և կարեկցանքի բնական վիճակից: Ոչ բռնի հաղորդակցումը ստեղծվել է օգնելու մեզ հաղթահարել այս բացասական միտումները, որպեսզի կարողանանք կապվել ուրիշների հետ ավելի խորը անհատական մակարդակում:

Ռոզենբերգը նաև հավատում էր, որ բոլոր մարդիկ ունեն որոշակի համընդհանուր կարիքներ: Երբ այդ կարիքները բավարարվեն, մենք կզգանք հաճելի հույզեր, ինչպիսիք են երջանկությունն ու գոհունակությունը. երբ դրանք չկան, մենք բացասական զգացողություններ ենք զարգացնում, ինչպիսիք են զայրույթը և հիասթափությունը: Ուստի մեր զգացմունքները ցույց են տալիս, թե արդյոք մեր կարիքները բավարարվում են, թե՛ ոչ:



Մյուսների տեսանկյունը հասկանալու և ընդունելու կարևորությունը ցույց տալու համար, կարող եք կիրառել «Նկատում ենք մեր տեսանկյան արձանը/աթոռը վարժությունը (մանրամասն նկարագրությունը տե՛ս «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

ԹԵՄԱ 1.3

Խաղաղություն և խաղաղաշինություն



Նպատակ

Բացատրել խաղաղություն հասկացությունը, սահմանել խաղաղաշինությունը՝ որպես երևույթ և գաղափարախոսություն:

Անհատական մակարդակում խաղաղությունը հանգիստ հոգեվիճակ է, որտեղ կարելի է ներդաշնակ լինել ինչպես ինքդ քո, այնպես էլ ուրիշների հետ: Արևելյան շատ կրոններում և փիլիսոփայություններում այն կոչվում է ներքին խաղաղություն և ձեռք է բերվում մեղիտացիայի և ինքնաճանաչման ջանքերի շնորհիվ՝ հասնելով ներդաշնակության: Այն ճանաչողական և հուզական վիճակ է, որը կապված է բարեկեցության և հանգստության զգացողության հետ, որն էլ իր հերթին որոշում է մեր վարքի ձևը:¹²

Քաղաքական մակարդակում խաղաղությունը պատերազմի կամ

ռազմական գործողությունների բացակայությունն է: Միջպետական հարաբերությունների համատեքստում համադրենք հետևյալ սահմանումները.

- խաղաղությունը ցանկացած բռնության բացակայությունը կամ թուլացումն է,
- *խաղաղությունը հակամարտության ոչ բռնի և ստեղծագործ փոխակերպումն է:*
Երկու սահմանումներն էլ ի նկատի ունեն հետևյալը.
- *խաղաղարար աշխատանքը խաղաղ միջոցներով բռնության թուլացմանն ուղղված աշխատանքն է,*
- *խաղաղության ուսումնասիրությունը խաղաղարար աշխատանքի պայմանների ուսումնասիրությունն է:*¹³

խաղաղության մշակույթը բազմազան հարաբերությունների համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համաձայնության, սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության և ազգային անվտանգության արդիականացման ապահովման գործընթացներ:

Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ խաղաղության մշակույթը «Արժեքների, դիրքորոշումների, ավանդույթների, վարքագծի տեսակների և կյանքի ուղիների այնպիսի ամբողջություն է, որն արտացոլում և ոգեշնչում է հարգանքը կյանքի, մարդկության և նրա իրավունքների նկատմամբ, բոլոր տեսակների բռնության մերժումը, տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև յուրաքանչյուրի խոսքի ազատության, կարծիքի և տեղեկատվության իրավունքի ճանաչում: Այն ապահովում է ժողովրդավարության, ազատության, արդարության, համերաշխության, հանդուրժողականության, բազմակարծության սկզբունքների ամրապնդում, տարբերությունների ընդունում և ժողովուրդների Էթնիկ, կրոնական, մշակութային և այլ խմբերի միջև փոխըմբռնում»:

13. Յոհան Գալթունգ; խաղաղություն խաղաղ միջոցներով; http://lib.ysu.am/disciplines_bk/0713f273fe5d987a6db63369603187c3.pdf

Յոհան Գալթունգը, ով հիմնադրել է խաղաղության ուսումնասիրությունների Օսլոյի ինստիտուտը, առաջ է քաշել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են **բացասական** և **դրական** խաղաղությունը: **Բացասական խաղաղությունը** բռնություն չկիրառելն է, իսկ դրական խաղաղությունը այնպիսի կառույցների մշակումն է, որոնց միջոցով կոնֆլիկտները կամ հարթվում են սկզբնական փուլում, կամ ընդհանրապես չեն առաջանում: **Դրական խաղաղությունը** սահմանվում է որպես բռնության բացակայություն և այնպիսի գործոնների նվազում կամ վերացում, որոնք վնաս են հասցնում անհատի կյանքի որակին կամ առաջացնում կոնֆլիկտ: Դրական խաղաղությանն անհրաժեշտ է տնտեսական և հասարակական արդարություն, աղքատության ու խտրականության վերացում և առողջ էկոլոգիա:

3. Գալթունգը «խաղաղության մշակույթը» բացատրում է՝ օգտագործելով երկու փոխաբերություն: Առաջինը **առողջությունն** է. խաղաղությունը բռնության համար այն է, ինչ առողջությունը հիվանդության համար՝ անձը պետք է լինի առողջ, ինչպես որ անձը, խումբը, նահանգը, ազգը, մարզը, քաղաքակրթությունը կարող են լինել խաղաղ: Երկրորդ փոխաբերությունը **սերն** է, որը մարմնի, մտքի և հոգու ներդաշնակ միությունն է: Նշված մեխանիզմների համադրմամբ, 3. Գալթունգի կարծիքով, մշակվում է խաղաղության մշակույթի գլխավոր արժեքը՝ **կրթությունը**. «Կրթության խնդիրն է՝ հաստատել տևական խաղաղություն: Առավելագույնն, ինչ կարող են անել քաղաքագետները, մեզ պատերազմներից հեռու պահելն է»:¹⁴



Պատերազմի և խաղաղության շուրջ քննարկումը կարելի է իրականացնել՝ կիրառելով «Ակվարիում քննարկում» մեթոդը (մանրամասն սկարագրությունը տես՝ «Կիրառելի մեթոդներ և վարժություններ» բաժնում):

Այսպիսով, խաղաղության հասնելը հեշտ գործընթաց չէ, ավելին այն բավականին բարդ է, բայց հնարավոր, միմիայն իրական ցանկության, աշխատասիրության և մեծ ջանքերի գնով, որակյալ կրթության միջոցով, հոգատարության, փոխադարձ հարգանքի և վստահության, պատրաստ բանակցելու, միմյանց լսելու, ճանաչելու, հաս-

կանալու, կարեկցելու և համագործակցելու՝ հանուն զարգացած պետության և մարդու հիմնարար կյանքի իրավունքի պաշտպանության:

Ի՞նչ է խաղաղաշինությունը

Նորվեգացի սոցիոլոգ Յոհան Գալթունը խաղաղաշինությունը սահմանել է որպես ինքնակարգավորվող հասարակարգերի ստեղծման գործընթաց, որը «վերացնում է պատերազմի պատճառները և առաջարկում այլընտրանքներ այն պարագայում, երբ պատերազմը դեռևս սպառնալիք է»: Կոնֆլիկտի հաղթահարման մեխանիզմները պետք է «ներկառուցվեն հասարակարգի մեջ և ներկա գտնվեն այնտեղ՝ որպես ջրամբար, որից կարող է օգտվել համակարգը, ճիշտ այնպես, ինչպես առողջ մարմինն ունի սեփական հակամարմիններ ստեղծելու ունակություն և կարիք չունի ժամանակավոր բժշկական միջամտությունների»:¹⁵

Այսպիսով, խաղաղաշինության բաղադրիչը որպես «խաղաղության մոտեցում» հղում է կատարում խաղաղության ուսումնասիրության ինստիտուտին: 1970-ականներին Գալթունգի կողմից մշակվել են մի քանի ազդեցիկ տեսություններ՝ առաջ մղելով ուսումնասիրության նոր ակադեմիական դաշտ, որը կոչվում է խաղաղության ուսումնասիրություն: Ըստ նրա առաջարկած մոտեցման՝ խաղաղաշինությունը պետք է ներկայացվի որպես «համակարգերի առաջմղում, որոնք կարող են ստեղծել կայուն խաղաղություն»:¹⁶

Մյուս կողմից՝ միջազգային խաղաղաշինության գիտությունների ամերիկացի պրոֆեսոր Ջոն Փոլ Լեդերախը խաղաղաշինությունը նկարագրում է որպես «համապարփակ հայեցակարգ, որը ներառում, գեներացնում և պահպանում է գործընթացների, մոտեցումների և փուլերի մի ամբողջ շարք, որոնք անհրաժեշտ են հակամարտություն-

15. Ejlertsen, Christian. Three Approaches to Peace: Peacekeeping, Peacemaking, and Peacebuilding. Edited by Johan Galtung. Vol. II. Peace, War and Defense. Copenhagen: Peace Research, 1976. pp 297-298.

16. Phan, Peter C. "Peacekeeping, Peacemaking, Peacebuilding: An Interreligious Spirituality for Just Peace." Violence, Religion, Peacemaking, 2016, 21-60. doi:10.1057/978-1-137-56851-9_2. pp. 103-115.

նը ավելի կայուն, խաղաղ հարաբերությունների փոխակերպելու համար: Այսպիսով, տերմինը ներառում է գործողությունների լայն շրջանակ, որոնք և՛ նախորդում են, և՛ հաջորդում են պաշտոնական խաղաղության համաձայնագրերին»: Մասնավորապես, խաղաղությունը դիտվում է ավելի շուտ որպես դինամիկ սոցիալական կառուցվածք, քան զուտ որպես ժամանակի փուլ կամ պայման: ¹⁷

Համեմատության համար նշենք, որ Գալթունգը խաղաղաշինությունը նկարագրում է որպես հակամարտության և խաղաղության այլընտրանքային մեխանիզմ, մինչդեռ Լեդերախը գտնում է, որ այն ռազմավարությունների և գործողությունների բազմազանություն է ուղղված հակամարտությունների փոխակերպմանը և կայուն խաղաղության հասնելուն: Ըստ Էության, Լեդերախը ընդլայնեց խաղաղաշինության գաղափարը (1997), որը առաջ էր քաշել Գալթունգը (1975):

Խաղաղաշինությունն իրավական և քաղաքական տեսանկյուններից ուսումնասիրելու նպատակով կարևոր է ընդգծել միջազգային խաղաղության և անվտանգություն պահպանման ՄԱԿ-ի հեռանկարները: Ստորև պատկերված է, թե ինչպես է ՄԱԿ-ը քարտեզագրում իր ներգրավվածությունը հակամարտությունների լուծման գործընթացներում: Այնտեղ, որտեղ վերջնական նպատակը կայուն խաղաղությունն է, և դրան հասնելու համար ՄԱԿ-ի ռազմավարության նպատակն է քայլ առ քայլ հետևել հետևյալ գործողություններին կամ գործողությունների համակցմանը:

Ըստ ՄԱԿ-ի խաղաղության ռազմավարության՝ կան որոշակի կանխարգելիչ, միջնորդական և կառուցողական քայլեր, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել կայուն խաղաղության վերջնական նպատակին հասնելու համար: Այդ քայլերն են՝ մարդասիրական օգնությունը, խա-

17. Lederach, John Paul. Building Peace: Sustainable Reconciliation in Divided Societies. Institute of Peace Press. Winnipeg, US: Media Production Services Unit, Manitoba Education, 2015. p. 20

պատերազմ

կայուն խաղաղություն



մարդասիրական
օգնություն

խաղաղության
ստեղծում
(միջնորդություն)

խաղաղության
պահպանում

խաղաղության
կառուցում

զարգացում

աղբյուր՝ Հաագայի խաղաղության համալսարան (UPEACE The Hague)

ղաղարարությունը, խաղաղապահությունը և խաղաղաշինությունը, որը հանգեցնում է զարգացման: ¹⁸


Այսպիսով՝ **խաղաղարարությունը** ներկայացվում է որպես հակամարտության խաղաղ կարգավորման գործընթաց, ինչպիսիք են դիվանագիտությունը, միջնորդությունը կամ բանակցությունները, որոնք նպաստում են հակամարտության ավարտին և լուծում այն հարցերը, որոնք հանգեցրել են դրան: Այնուհետև հերթը տրվում է **խաղաղապահությանը**, որը ընդգրկում է համաձայնեցված ռազմական գործողություններ, որը կարող է ձեռնարկվել բոլոր հիմնական հակամարտող կողմերի համաձայնությամբ և նախատեսված է վերահսկելու և հեշտացնելու համար համաձայնագրի իրականացում (այսինքն՝ հրադադար, զինադադար կամ նման այլ համաձայնագիր): Այն միտված է աջակցելու դիվանագիտական ջանքերին՝ երկարաժամկետ քաղաքական կարգավորման հասնելու համար: Վերջապես, **խաղաղաշինությունը** կայունացման գործողություններ են, հիմնականում դիվանագիտական և տնտեսական, որոնք ամրապնդում են և վերաձևավորում կառավարական ենթակառուցվածքները և ինս-

18. "Security Council, SC, UNSC, Security, Peace, Sanctions, Veto, Resolution, President, United Nations, UN, Peacekeeping, Peacebuilding, Conflict Resolution, Prevention." United Nations. Accessed October 10, 2018. <http://www.un.org/en/sc/>

տիտուտները՝ խուսափելու համար հակամարտությունների հետագա կրկնությունից: ՄԱԿ-ի խաղաղության աջակցության գրասենյակը խաղաղաշինությունը բացատրում է որպես «շարունակական ռազմավարություն, գործընթացներ և գործողություններ, որոնք ուղղված են երկարաժամկետ խաղաղության պահպանմանը՝ ուշադրության կենտրոնում պահելով կոնֆլիկտի ռեցիդիվների հավանականության նվազեցման վրա»:¹⁹

Խաղաղարար և խաղաղապահ գործողությունները առաջին անգամ գործարկվել են ՄԱԿ-ի կողմից 1956 թվականին՝ որպես ՄԱԿ-ի առաքելություններ: Մինչդեռ խաղաղաշինության հայեցակարգը ՄԱԿ-ի շրջանակներում շրջանառվել սկսեց 1990-ականներից: Այնուամենայնիվ, ներկայիս քաղաքական աշխարհը դրդում է վերափոխել վերը նշված գործողությունների հայեցակարգերը: Այդ իսկ պատճառով նրանց միջև սահմանները դառնում են ավելի ու ավելի մշուշոտ ու ոչ միանշանակ:

19. "Peacebuilding and The United Nations - United Nations ..." United Nations. Accessed October 10, 2018. www.un.org/en/peacebuilding/pbso/pbun.shtml.





● Կլոր շրջան քննարկում

հրականացում: Մասնակիցներին առաջարկեք կլոր շրջանով նստել: Նրանց հարցրեք, թե որոնք են կոնֆլիկտի դրական և բացասական կողմերը: Եթե դասասենյակում չկա գրատախտակ, ապա պատասխանները կարող եք թղթին գրել: Թույլ տվեք, որպեսզի յուրաքանչյուրն իր կարծիքն արտահայտի: Խրախուսեք բոլոր մասնակիցների ակտիվ մասնակցությունն ու տարբեր կարծիքների վերհանումը: Ամփոփեք քննարկումը:

Անհրաժեշտ պարագաներ: Թուղթ, մարկեր կամ գրատախտակ, կավիճ:

● Կոնֆլիկտի ծառ

հրականացում: Կոնֆլիկտի վերլուծության նպատակով գրատախտակին կամ ֆլիպչարթին նկարեք ծառ: Ծառը պետք է պատկերված լինի ճյուղերով և հողի մեջ գտնվող արմատներով: Բացատրեք, որ ծառի բունը ներկայացնում է հիմնական խնդիրը, ճյուղերը՝ ազդեցությունները, արմատները՝ կոնֆլիկտի առաջացման բուն պատճառները: Մասնակիցներին առաջարկեք, որպեսզի որևէ խնդիր նշեն. կարող է լինել դասարանային տեղական խնդիր, որը կվերլուծեք համապատասխանաբար ծառի տեսքով՝ վերլուծելով ազդեցություններն ու բուն պատճառները: Կոնֆլիկտը վերլուծելու համար կարող եք օգտագործել հետևյալ հարցերը

- Ո՞րն է հիմնական կոնֆլիկտը/ խնդիրը:
- Որո՞նք են կոնֆլիկտի պատճառները:
- Ի՞նչ հետևանքների է հանգեցնում կոնֆլիկտը:

Ամփոփեք վարժությունը

Անհրաժեշտ պարագաներ: Ֆլիպչարթ, գունավոր մարկերներ, գրատախտակ, կավիճ:

● Աշխարհի սրճարան

հրականագում: Մասնակիցներին բաժանեք 5 թիմի՝ յուրաքանչյուր թիմին հատկացնելով մեկ ֆլիպչարթ՝ վրան գրված կոնֆլիկտը լուծելու 5 եղանակները. խուսափում, փոխզիջում, մրցակցություն, համագործակցություն, հարմարվողականություն: Թիմերին առաջարկեք նստել սեղանների շուրջ. ամեն մեկն իր՝ կոնֆլիկտի լուծման եղանակի ֆլիպչարթով: Ժամանակ հատկացրեք, որպեսզի մասնակիցները հերթով մոտենան բոլոր սեղաններին և կոնֆլիկտի լուծման յուրաքանչյուր եղանակի ֆլիպչարթին գրեն համապատասխան նկարագիրը, բացատրությունը, բնութագրող հատկանիշներն ու օրինակներ: Երբ մասնակիցները մոտենում են բոլոր սեղաններին և համապատասխանաբար լրացնում կոնֆլիկտի լուծման եղանակի բնութագրերը, ամփոփեք վարժությունը՝ թիմերին խնդրելով ներկայացնել իրենց՝ խմբի կոնֆլիկտի եղանակի բնութագիրն ու նշանակությունը:

Անհրաժեշտ պարագաներ: 5 ֆլիպչարթ, մարկեր:

● Թղթերով խաղ

հրականագում: Նախապես սենյակի կենտրոնում գրասեղանի վրա, A4 ձևաչափի 5 սպիտակ թուղթ և գունավոր մատիտներ դրեք: Մասնակիցներին բաժանեք 4-5 հոգանոց թիմերի՝ յուրաքանչյուր թիմին տալով տարբեր առաջադրանք՝ առաջին թիմի համար կարևոր է, որ բոլոր թղթերը լինեն գետնին դրված, մյուսի համար՝ որ բոլորը լինեն շրջանաձև դասավորված, երրորդի համար՝ որ բոլոր թղթերի

վրա միաժամանակ նստեն, իսկ վերջինի դեպքում որ բոլոր թղթերին տնակ նկարած լինեն:

Շատ կարևոր է, որ թիմերը չիմանան մեկը մյուսի առաջադրանքի մասին: Ժամանակ հատկացրեք, որպեսզի խոսեն և ռազմավարություն մշակեն իրենց նպատակին հասնելու համար: Յուրաքանչյուր թիմի նպատակն է առաջինը իրականացնել իրենց տրված առաջադրանքն ու հաղթել: Մի քանի անգամ կրկնեք վարժությունը, մինչև գտնեն փոխըմբռնման միջոցը: Քննարկեք խաղի արդյունքը՝ վերլուծելով հաղթանակի հասնելու ճանապարհը հետևյալ հարցերի օգնությամբ.

- Արդյո՞ք բոլորը գոհ են խաղի արդյունքով:
- Ո՞ր խումբն է իրեն զգում հաղթած, ո՞րը՝ պարտված:
- Խաղի ընթացքում կոնֆլիկտի հաղթահարման ի՞նչ մեթոդներ են կիրառվել:
- Ի՞նչն այլ կերպ կանեիք ավելի լավ արդյունք ունենալու համար:
- Հնարավոր կլինե՞ր բոլոր թիմերը միաժամանակ հաղթեին: Ինչպե՞ս:

Անհրաժեշտ պարագաներ: Գունավոր մատիտ, թուղթ:

● Ժեստերով խաղ

հրականացում: Մասնակիցներին առաջարկեք մեկ շարքով միմյանց մեջքով կանգնել:

Շարքի վերջում գտնվող մասնակիցը իր դիմացի մասնակցին ժեստերով որևէ նախադասություն է հաղորդում. այս մասնակիցը հաղորդագրությունը պետք է փոխանցի շարքում կանգնած մյուս մասնակցին և այսպես շարունակ մինչև առջևում կանգնած մասնակիցը: Վարժության ընթացքում մասնակիցները շարունակում են միմյանց մեջքով կանգնած մնալ և շրջվել միայն հաղորդագրությունը ստանալիս: Շարքի սկզբում կանգնած մասնակիցը հաղորդագրությունը պետք է փոխանցի հաղորդագրության սկզբնաղբյուրին՝ այնպես,

ինչպես իրեն է հասել և ինչպես ինքն է հասկացել:

Համեմատեք սկզբնաղբյուրի և շղթայի վերջում գտնվող մասնակցի հաղորդագրությունները՝ տեսնելու համար, թե ինչքան է այն փոփոխվել:

Հարցերի միջոցով ամփոփեք վարժությունը՝ շեշտելով նյութի հետ տեղի ունեցող ձևափոխությունները, որոնք տեղի են ունենում հաղորդացման ընթացքում ընկալման խեղաթյուրման արդյունքում:

- Որքանով էր ձեր ընկալումը համընկել իրականության հետ:
- Հասկանալի՞ էր հաղորդակցման լեզուն:
- Հե՞շտ էր կրկնօրինակել այն, ինչը բառերով չէին բացատրել:
- Ըստ ձեզ ի՞նչ էր վարժության նպատակը: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս է ոչ բանավոր խոսքը նպաստում հաղորդակցությանը:

Ինչպե՞ս է փոխակերպվում տեղեկությունը և ինչո՞ւ:

● «Նարնջի պատմություն» իրավիճակային վերլուծություն

Իրականացում: Մասնակիցներին բաժանեք 3-4 հոգանոց թիմերի և տպած տվեք նարնջի պատմությունը:

Անին և Մարին քույրեր են: Անին այսօր ուզում է նարնջի հյութ խմել, իսկ Մարին՝ նարնջի կեղևից տորթ պատրաստել: Սառնարանում միայն մեկ նարինջ կա: Քույրերը սկսում են վիճել, քանի որ յուրաքանչյուրը շատ համառ է իր ցանկության մեջ: Ոչ-որ չի ցանկանում զիջել և սկսում են բարձրաձայն կռվել, ասելով՝

- Ես ուզում եմ նարինջը:

- Ինձ պետք է նարինջը:

Ձայները լսելուն պես, գալիս է նրանց մայրիկը: Տեսնելով նարնջի շուրջը վիճող աղջիկներին՝ փորձում է արագ լուծում տալ՝ երկու կես անելով նարինջն ու համապատասխանաբար տալով աղջիկներին: Անին

օգտագործում է միայն նարնջի միջուկը հյութի համար՝ դեն նետելով կեղևը, իսկ Մարին՝ նարնջի կեղևը՝ դեն նետելով միջուկը: Արդյունքում, Անին քիչ քանակով հյութ է ստանում, իսկ Մարին գրեթե չի զգում նարնջի կեղևի համը տորթում: Երկուսն էլ դժգոհում են, քանի որ չեն ստանում իրենց ուզած արդյունքը:

Առաջադրանք

- Ձեզ պատկերացրեք մայրիկի փոխարեն, ի՞նչ կանեիք աղջիկ-ներին գոհացնելու համար:
- Մանրամասն նկարագրեք քայլերն ու ընթացքը:

Մասնակիցներին առաջարկեք, որ իրենց պատկերացնեն մայրիկի փոխարեն և փորձեն արդյունավետ լուծում առաջարկել տրված իրավիճակին: Անհրաժեշտ է, որ մանրամասն նկարագրեն քայլերն ու ընթացքը:

Մեկնաբանեք և հարցերի միջոցով ամփոփեք վարժությունը՝ նշելով բանակցության և համագործակցության կարևորությունը կարիքների լիարժեք բավարարման համար:

- Ինչո՞ւ են վիճում քույրերը: Ի՞նչ են ուզում:
- Հասկանալ, թե աղջիկներին ինչո՞ւ է անհրաժեշտ նարինջը, այլ կերպ ասած՝ բացահայտել կարիքը:
- Ինչպիսի՞ լուծում է առաջարկում մայրիկը:
- Կողմերի ցանկությունները լիարժեք բավարարվա՞ծ են:
- Ի՞նչ կանեիք, եթե մայրիկի փոխարեն լինեիք: Մանրամասնեք:
- Հնարավո՞ր է՝ երկու կողմերն էլ լիարժեք կերպով իրենց ցանկությունները բավարարեն: Ինչպե՞ս:
- Ինչո՞ւ են քույրերն իրականում վիճում: Հաղորդակցվե՞լ և հարցրե՞լ են միմյանց նարինջն ուզելու իրական պատճառը:
- Ի՞նչ է նշանակում բանակցել և ինչո՞ւ է կարևոր:

Անհրաժեշտ պարագաներ: նարնջի պատմությունը տպած:

● Նկարում ենք մեր տեսանկյան արձանը/աթոռը

Իրականացում: Մասնակիցներին առաջարկեք նկարել արձան/աթոռ/կամ ցանկացած իր, որը այդ պահին կունենաք ձեր ձեռքի տակ: Տեղադրեք իրը սենյակի մեջտեղում և հոգ տարեք, որ պեսզի չտեղաշարժեն այն: Մասնակիցներին առաջարկեք նստել իրենց հարմար հատվածում, այն պայմանով, որ նկարելու ընթացքում չպետք է փոխեն իրենց տեղը. կարևոր է, որպեսզի յուրաքանչյուրը միևնույն իրը նկարի իր տեսանկյունից/դիտանկյունից: Երբ ավարտեն նկարելը, առաջարկեք, որպեսզի ներկայացնեն աշխատանքները: Վերլուծեք յուրաքանչյուր նկարը՝ ընդգծելով միևնույն իրի տարբեր պատկերումը՝ կախված մասնակցի դիտանկյունից: Ամփոփեք վարժությունը հետևյալ հարցերի միջոցով՝

- Ի՞նչ նմանություն և տարբերություն եք տեսնում նկարներում
- Նկարների ո՞ր հատվածներն են նման, և որո՞նք՝ տարբեր: Ինչո՞ւ
- Ինչպե՞ս է ստացվել, որ նկարել եք միևնույն իրը, բայց այսքան տարբեր:
- Ի՞նչ է նշանակում տեսանկյուն/դիտանկյուն:
- Եթե ցանկանայինք, կարո՞ղ էինք մեկ ուրիշի տեսանկյունից նայել:
- Համաձայն եք, որ յուրաքանչյուր երևույթ/իրականություն ունի այլ տեսանկյուն:
- Իսկ կարո՞ղ եք պատկերացնել, որ կոնֆլիկտը նույնպես ունի այլ տեսանկյուն:
- Որը՞ կարող է լինել կոնֆլիկտի այլ տեսանկյունը:
- Եթե փորձենք կոնֆլիկտին մյուս տեսանկյունից նայել, հնարավոր կլինի՞ր համարժեք լուծում գտնելը: Ինչպե՞ս:

Անհրաժեշտ պարագաներ: Մատիտներ, թուղթ, արձան/աթոռ/կամ ցանկացած իր, որը այդ պահին կունենաք ձեր ձեռքի տակ

● Ակվարիում քննարկում

հրականացում: Դասավորեք աթոռները շրջանաձև: Շրջանի ներսում կազմեք փոքր շրջան՝ 3-4 աթոռով: Ներկայացրեք խմբին, որ այժմ քննարկումը կազմակերպելու են ակվարիումում: Ակվարիումը ներսի փոքր շրջանն է, որում Դուք կհնչեցնեք հարցեր, որոնց արձագանքելու համար մասնակիցները մեծ շրջանից պետք է տեղափոխվեն ակվարիում փոքր շրջան, որպեսզի նրանց ձայնը լսելի լինի:

Նշեք, որ միայն փոքր շրջանում գտնվելով կկարողանան արտահայտել իրենց տեսակետը. ակվարիումից դուրս նրանց ձայնը լսելի չէ: Ուստի, պետք է սպասեն մինչև փոքր շրջանում տեղ ազատվի, որպեսզի այն զբաղեցնեն և խոսեն:

Նաև մասնակիցների ուշադրությունը հրավիրեք այն հանգամանքի վրա, որ յուրաքանչյուրն ուշադիր լինի ակվարիումը երկար չզբաղեցնելուն, որպեսզի բոլորն արտահայտվելու հավասար հնարավորություն ունենան:

Քննարկումը զարգացրեք հարցերով՝ ինչպես նաև միմյանց պատասխաններին արձագանքելու հնարավորություն ընձեռնելով:

- Հնարավոր է պատերազմը քննադատել: Ինչո՞ւ:
- Ի՞նչն է պատերազմի պատճառը և հետևանքը:
- Պատերազմում հաղթողներ կա՞ն: Պատերազմում հաղթողն ի՞նչ է շահում, իսկ ի՞նչ է կորցնում:
- Ի՞նչ է խաղաղությունը: Կարևո՞ր է:
- Ո՞րն է բացասական և դրական խաղաղության տարբերությունը:
- Խաղաղությունն ի՞նչ է ապահովում:
- Ինչպե՞ս է մարդն իրեն զգում խաղաղության պայմաններում:
- Ի՞նչպես կարող ենք հասնել խաղաղության:

1. Էլեոնորա Միրզոյան; Ղեկավարի կոնֆլիկտային վարքի դրսևորման գենդերային առանձնահատկությունները; <http://dspace.paara.am/xmlui/bitstream/handle/123456789/128/%D5%84%D5%AB%D6%80%D5%A6%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6%20%D4%B7%D5%AC%D5%A5%D5%B8%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1.pdf?sequence=1&isAllowed=y>
2. Վահե Պետրոսյան; Արդյոք կարո՞ղ է նպաստավոր լինել կոնֆլիկտը; <https://enlightngo.org/post/2304>
3. Երևանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան; Բանբեր; <https://brusov.am/website/documentation/files/5444ea54.pdf>
4. Ֆրանկո Վակկարի; Կոնֆլիկտների ստեղծագործական վերափոխման Ռոնդինեի մեթոդը; 2018
5. Ո՞րն է քո կոնֆլիկտը լուծելու եղանակը; <https://www.waldenu.edu/news-and-events/walden-news/2017/0530-whats-your-conflict-management-style>
6. Գրեյթիլ; Կոնֆլիկտը լուծելու եղանակները; <https://www.familyconsumersciences.com/2018/10/styles-for-handling-conflict-lesson-activities/>
7. Լորի Փեթերսոն; Ուժեղ գործիք. մրցակցություն և համագործակցություն; <https://coachcampus.com/coach-portfolios/power-tools/lori-peterson-competition-vs-collaboration/>
8. Թանթրուշյան, Հարությունյան; Արդյունավետ գործարար հաղորդակցություն; https://resourcecentre.savethechildren.net/pdf/communication_manual_web.pdf/
9. Վիլ Բենթոն; Բանակցություն; <https://www.investopedia.com/terms/n/negotiation.asp>
10. Ոչ բռնի հաղորդակցման ներածություն; <https://baynvc.org/basics-of-nonviolent-communication/>

11. Խաղաղության իմաստը; <https://hy.warbletoncouncil.org/paz-577>
12. Յոհան Գալթունգ; Խաղաղություն խաղաղ միջոցներով; http://lib.yasu.am/disciplines_bk/0713f273fe5d987a6db63369603187c3.pdf
13. Լավ կառավարման սկզբունքների ներդրումը՝ որպես ՀՀ-ում խաղաղության մշակույթի հաստատման գործընթաց; https://mmmargaryan.wordpress.com/2016/04/02/%D5%AC%D5%A1%D5%BE-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BD%D5%AF%D5%A6%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A4%D6%80/#_ftn6
14. Дарвин Ч.; О выражении эмоций у человека и животных; <http://vivovoco.astronet.ru/VV/PAPERS/BIO/DARWIN/EMOTIONS/EMOTIONS.HTM>
15. 6Ejlers, Christian. Three Approaches to Peace: Peacekeeping, Peacemaking, and Peacebuilding. Edited by Johan Galtung. Vol. II. Peace, War and Defense. Copenhagen: Peace Research, 1976. pp 297-298.
16. Phan, Peter C. "Peacekeeping, Peacemaking, Peacebuilding: An Interreligious Spirituality for Just Peace." Violence, Religion, Peacemaking, 2016, 21-60. doi:10.1057/978-1-137-56851-9_2. pp. 103-115.
17. Lederach, John Paul. Building Peace: Sustainable Reconciliation in Divided Societies. Institute of Peace Press. Winnipeg, US: Media Production Services Unit, Manitoba Education, 2015. p. 20
18. "Security Council, SC, UNSC, Security, Peace, Sanctions, Veto, Resolution, President, United Nations, UN, Peacekeeping, Peacebuilding, Conflict Resolution, Prevention." United Nations. Accessed October 10, 2018. <http://www.un.org/en/sc/>.
19. "Peacebuilding and The United Nations - United Nations ..." United Nations. Accessed October 10, 2018. www.un.org/en/peacebuilding/pbso/pbun.shtml.

၂၀၂၀



ԹԵՄԱ 2.1

Խաղաղությունը՝ որպես մարդու իրավունքների հիմքում ընկած արժեք



Նպատակ

Ցույց տալ խաղաղության ու մարդու իրավունքների կապը՝ գաղափարականից մինչև գործնական՝ օրինակներով կապելով այն իրականության հետ:

Մարդու իրավունքների (ՄԻ) հիմքում ընկած հիմնական սկզբունքներն ու արժեքները



«Այնպես, ինչպես ձեզ հաճելի չէ ցավը, այդպես էլ ուրիշներին այն հաճելի չէ: Գիտակցելով հավասարության այս սկզբունքը, վերաբերվեք ուրիշներին հարգանքով և կարեկցանքով» (Սուման Սուտամ²⁰)

Մարդու իրավունքները բարոյական սկզբունքներ ու նորմեր են, որոնք ապահովում են մարդկային որոշակի վարքագիծ: Դրանք պա-

հանջներ են, որոնք պաշտպանում են մարդու արժանապատվությունը, կարգավորում մարդ-մարդ, մարդ-համայնք, մարդ-պետություն ու մարդ-աշխարհի փոխհարաբերությունները²¹: Մարդու իրավունքները ազատության, արդարության և խաղաղության հիմքն են: Նրանք խթանում են անհատի և համայնքի ամբողջական զարգացումը:

«Մարդու իրավունքներն ու ազատությունները» նոր գաղափար չեն, դրանք հայտնի են դեռևս Հին Հունաստանից ու Հին Հռոմից: Ազատության վերաբերյալ առաջին հիշատակումը հանդիպում է մ.թ.ա. 14-րդ դարում²²: Մարդու իրավունքները գոյություն ունեին դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը: Մարդու իրավունքների վերաբերյալ նախնական իրավական ձևակերպումներն առաջին անգամ տեղ են գտել 1215 թ. Անգլիական «Մագնա Կարտա» կոչվող փաստաթղթում, որը պայմանագիր էր անգլիական թագավորի և բարոնների միջև: Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական կոնցեպցիաները զարգացել են 18-19-րդ դարերում:



Առաջարկ՝ այստեղ առաջարկվում է կատարել վարժություն 1-ը, քննարկել որոշ իրավունքներ (Սկզբունքների խաղ):

Մարդու իրավունքները՝ հետայսու ՄԻ, կարելի է դիտարկել թե՛ որպես վերացական գաղափար, թե՛ որպես փորձառություն: Թե՛ որպես վերացական գաղափար, թե գործնականում կիրառվող սկզբունքների ու նորմերի ամբողջություն, ՄԻ-ի հիմքում ընկած են որոշակի արժեքներ, որոնք էլ կազմում են ՄԻ-ի շրջանակը, առանց որի մենք չենք կարող հասնել մեր ամբողջական ներուժի իրացմանը: Տարբեր ակադեմիկոսների կողմից առանձնացվում են ՄԻ հիմքում ընկած հետևյալ արժեքները (առաջին երկուսը՝ արժանապատվությունն ու հավասարությունը համարվում են հիմնաքարային արժեքներ)՝

- **արժանապատվություն** - այն համոզմունքը, որ բոլոր մարդիկ ունեն առանձնահատուկ արժեք, որը կապված է նրանց մարդ-

կային բնույթի հետ: Այլ կերպ ասած՝ մարդու արժեքը հարգանք է ակնկալում կամ պահանջում²³: Արժանապատվությունը չի կապվում ռասայի կամ Էթնիկական պատկանելության, գույնի, սեռի, գենդերային կողմնորոշման, հաշմանդամության, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ:

- **հավասարություն** - յուրաքանչյուր անհատ պետք է ունենա իր կյանքը և տաղանդները առավելագույնս օգտագործելու հավասար հնարավորություններ: Սա նաև այն համոզմունքն է, որ ոչ ոք չպետք է ունենա կյանքի ավելի վատ հնարավորություններ՝ անկախ իր հատկությունների, յուրահատկությունների²⁴:
- **հակախտրականություն** - խտրականության կանխարգելում (անարդար վերաբերմունք ինչ-որ մեկի նկատմամբ սեռի, ռասայի, տարիքի և այլնի պատճառով)²⁵
- **հանդուրժողականություն** - բազմազանության ընդունումը և բացասական վերաբերմունք չցուցաբերելը տարբեր անհատների նկատմամբ: «Ձեզ կարող է նա կամ այդ երևույթը դուր չգալ, բայց պետք է հավաստիացնեք, որ դրա պատճառով ոչ ոք չի վնասվի»²⁶:
- **ազատություն** - ուժ կամ իրավունք է՝ գործելու, խոսելու կամ մտածելու այնպես, ինչպես ուզում եմ՝ առանց խոչընդոտների կամ կաշկանդումների, ինչպես նաև բնորոշվում է կառավարության կողմից ցուցաբերվող բռնության բացակայությամբ²⁷:
- **հարգանք** - անհատի՝ իր անհատականության ու արժանապատվության նկատմամբ, գնահատանքն իր և այլոց կողմից²⁸:
- **պատասխանատվություն** (պետության, անհատի, այլ պատասխանատու մարմիններ) - հարգանքն այլոց իրավունքների

23. Human Dignity and Human Rights, p. 10, <https://www.legal-tools.org/doc/e80bda/pdf/>

24. Understanding equality, <https://bit.ly/32Ty7ni>:

25. Anti-discrimination, <https://bit.ly/34gB5mH>.

26. Demanding Diversity: Tolerance is Not Enough, <https://www.psychologytoday.com/us/blog/culturally-speaking/201812/demanding-diversity-tolerance-is-not-enough>:

27. What Is Freedom?, <https://www.livescience.com/21212-what-is-freedom.html>:

28. Compass, ch. 4 "What are human rights?", <https://www.coe.int/en/web/compass/what-are-human-rights->

Նկատմամբ եկթադրում է նաև պատասխանատվություն սեփական գործողությունների նկատմամբ՝ ջանքեր գործադրելով մեկի և բոլորի իրավունքների իրացման ուղղությամբ:²⁹

Մարդու իրավունքները ներառում են նաև անքակտելիության, անբաժանելիության, փոխկապակցվածության ու համամարդկայնության/համաշխարհայնության սկզբունքները:

Մի անքակտելիության սկզբունքը նշանակում է, որ ոչ ոք չի կարող կորցնել իր իրավունքները, դրանք կապված են հենց մարդկային գոյության փաստի հետ, ավելին՝ դրանք բնորոշ են բոլոր մարդկանց: Իհարկե, լինում են որոշակի դեպքեր, երբ այդ իրավունքները սահմանափակվում են, ինչպես օրինակ հանցագործությունը, հատուկ իրավիճակները և այլն:

Մի անբաժանելիության, փոխլրացման ու փոխկապակցվածության սկզբունքը նշանակում է, որ բոլոր իրավունքներն իրար լրացնում են և անհնար է դրանք դիտարկել մեկուսացված կամ իրարից բաժան համատեքստում (օրինակ՝ Մի խախտումներ դիտարկելիս հավանականությունը, որ խախտվում է մարդու ընդամենը մի իրավունքը շատ ավելի քիչ հավանական է, քան՝ մի քանիսը):

Մի համամարդկայնության/համաշխարհայնության սկզբունքը նշանակում է, որ դրանք հավասարապես վերաբերում են բոլոր մարդկանց աշխարհի ցանկացած կետում և առանց ժամանակի սահմանափակման: Ավելին, յուրաքանչյուր մարդ/անհատ անկախ իր ռասայի կամ էթնիկական պատկանելության, գույնի, սեռի, գենդերային կողմնորոշման, հաշմանդամության, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ծննդյան կամ այլ կարգավիճակի, իրավունքի ունի օգտվելու և իրացնելու դրանք:



Առաջարկ՝ այստեղ առաջարկվում է կատարել **վարժություն 2-ը**՝ կարևորելով արժեքները, քննարկելով դրանք ու խոսելով դրանց առաջնահերթությունից

29. Նույն տեղում:

(Աստիճանակարգում):

Այս արժեքներն ու սկզբունքները մեր առօրյայից հեռու և այլոց կողմից մտածված երևույթներ ու գաղափարներ չեն: Դրանք, ինչպես արդեն վերևում նշվեց, բարոյական սկզբունքներից ու նորմերից բխող ու ծագած գաղափարներ են, որոնք դեռևս հնագույն ժամանակներից եղել են տարբեր քաղաքակրթություններում, մշակույթներում և կրոններում՝ նպաստելով մարդկանց խմբերի, ցեղերի ու ավելի բարդ կառուցվածք ունեցող հասարակության և պետությունների խաղաղ փոխգործոթյանը:

Խաղաղ փոխգործոթյունը հիմնականում ներառում է առանց բռնության, վեճի, թշնամանքի, ռազմական գործողության ու միմյանց վնասման կենսագործունեությունը: Խաղաղությունը, ինչպես և արդեն բացատրվել է այս մեթոդական ձեռնարկի մյուս գլուխներում լայն ու բազմիմաստ հասկացություն է: Մի կոնտեքստում այն դիտարկելիս կարևոր է իմանալ, որ տարբեր ակադեմիական շրջանակներ այն համարում են մի կողմից մարդու իրավունքների մեջ մտնող արժեքների համախմբի մաս, իսկ մյուսները՝ նշում են, որ այն ավելի լայն կոնցեպտ/գաղափար է, որը բխում է մարդու իրավունքների ու դրանց արժեքների ապահովումից ու տարածումից:

Շատերն ունեն այն թյուրմբռնումը, որ խաղաղությունը բնութագրվում է միայն պատերազմի բացակայությամբ, սակայն այն ներառում է նաև մի շարք այլ գաղափարներ: Պատերազմն ու ռազմական գործողությունները, ըստ Գալթունգի, ունեն արմատներ կամ պատճառներ, որոնցից են ռեսուրսների անհավասար բաշխումը, խտրականությունը և ուժերի անհավասարակշռությունը:³⁰ Սրանց բացառման համար անհրաժեշտ է իրական խաղաղություն՝ այսլերպ տարբերակելով դրական և բացասական խաղաղությունը (տես՝ մաս 1): Բացասական խաղաղության օրինակ է Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը, որը 1994թ.-ին ավարտվել էր հրադադարով, կողմերը արդյունավետ բանակցություններ չէին վարում, ինչը ձգվեց 30 տարի, մինչև որ

30. T-Kit 12: Youth transforming conflict, pp. 65-66, <https://pjp-eu.coe.int/en/web/youth-partnership/t-kit-12-youth-transforming-conflict>.

բռնկվեց 44-օրյա պատկերազմը:

Այսպիսով՝ հետևելով այս տեսությանն ու գաղափարին, պարզ է դառնում, որ ՄԻ հիմքում ընկած արժեքների սասանումն ու դրանց չհետևելը կարող է հանգեցնել պատերազմի կամ դրական խաղաղության խանգարման: Ավելին, այս օրինակը ցույց է տալիս խաղաղության՝ որպես ավելի լայն կոնցեպտի և ՄԻ-ից վեր գաղափարի տարբերակը: Նշվում է նաև, որ ՄԻ-ը հանդիսանում են ազատության, արդարության և խաղաղության հիմքն ու հիմնաքարը³¹:

Իսկ երկրորդ գաղափարը (իրական ու դրական խաղաղությունը), որը դիտարկում է խաղաղությունը՝ ՄԻ արժեք, քննարկում է այս տեսակետը, նշելով, որ օրինակ տարբեր փաստաթղթերում արժանապատվության ու հավասարության, համամարդկայնության/համաշխարհայնության կողքին, մշտապես հանդես է գալիս խաղաղությունը՝ թե՛ որպես սկզբունք, թե՛ որպես արժեք՝ «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղության իրավունք»:

Հիշեք նաև, բացի այն, որ մենք դիտարկում ենք խաղաղությունը որպես արժեք ու գաղափար, կարևոր է նաև հասկանալ, որ վերջիններիս հասնելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ ու գործընթաց, ինչը նշանակում է, որ խաղաղությունը կարող ենք դիտարկել նաև որպես շարունակական գործընթաց: Փաստ է, որ մեզնից ոչ մեկ չի ծնվում վերոնշյալ արժեքների հակառակն ի ծնե ունենալով (անհանդուրժողականությունը, անարգանքը, ատելությունը, անհավասարությունը, խտրականությունը և այլն): Մենք՝ անհատներս, այս կամ այն խմբի մաս դառնալով կամ խմբեր ստեղծելով, սկսում ենք հետևել կամ վերարտադրել այնպիսի արժեքներ, որոնք ինքներս ճշմարիտ ենք համարում, կամ որոնք այդ խումբն է ճշմարիտ համարում: Այստեղ գալիս է յուրաքանչյուր անհատի ընտրությունը, թե որ արժեքներով նրանք կառաջնորդվեն և այդ արժեքները ինչ գործընթացների կբերեն ու ինչ արդյունքներ կունենան:

Առաջարկ՝ առաջարկվում է կատարել վարժություն 3-ը կամ 4-ը, ինքնուրույն գտնել և քննարկել որոշակի իրա-



31. HR Library, <http://hrlibrary.umn.edu/education/pihre/partone.htm>:

վիճակներ՝ գլոբալ ու տեղական օրինակների հիմքով
(«Անարդար իրավիճակներ», «Նկարների փոխանակում/կիսում»):

● Հարցեր ?

Այս հարցերի միջոցով կկարողանաք ամփոփել դասը, դրանց հիմքով տալ էսսեներ, ստուգել, թե սովորողները որքանով կարողացան յուրացնել դասը կամ դասերը, ստեղծել քննարկումներ ու լսել նրանց կարծիքները՝ թեմայի վերաբերյալ:

- Ի՞նչ է խաղաղաշինությունը, սեփական բառերով բացատրեք ու սահմանեք այն:
- Ի՞նչ կապ կա մարդու իրավունքների ու խաղաղաշինության մեջ:
- Ի՞նչ արժեքներ կան, որոնք ընկած են մարդու իրավունքների հիմքում: Ի՞նչ դեր ունի խաղաղությունն այս արժեքների կողքին:
- Ինչպե՞ս են մարդու հիմնարար իրավունքները նպաստում աշխարհում, մեր երկրում կամ բնակավայրում խաղաղության հաստատմանը:
- Որքանո՞վ են կարևոր ու արդյունավետ անձնական, ընտանեկան ու համայնքային մակարդակում մարդու իրավունքներն ու խաղաղությունը: Բերե՛ք օրինակներ, դրանց կարևորության/արդյունավետ կամ անկարևոր ու ոչ արդյունավետ լինելու վերաբերյալ:

ԹԵՄԱ 2.2

Մարդու իրավունքներ ու խաղաղաշինություն

● ● Նպատակ

Քննարկել խաղաղության դերը մարդու իրավունքների փաստաթղթերի ու միջազգային իրավունքի կոնտեքստում: Բացատրել մարդու

իրավունքների ու խաղաղաշինության կապը:



Առաջարկ - դասը կարող եք սկսել առաջադրանք 5
(«Վերլուծելով Մարթին Լյութեր Քինգի ելույթները»):

Մարդու իրավունքների ծագումը

Դեռևս հնագույն ժամանակներից մարդկանց տարբեր խմբերում, ինչ հնագույն պետություններում եղել են որոշակի կանոններ, որոնցով նրանք առաջնորդվել են: Իհարկե, հիմնականում այդ խմբերի ներսում այդ կանոնները տարբերվել են այս կամ այն խմբի համար (որոշակի առանձնահատկություններից ելնելով, օրինակ մ.թ.ա 1792-1750 թթ. Բաբելոնյան թագավորության իշխան Համմուրաբին փորձ կատարեց ամրագրել օրենքների մի փաստաթուղթ, որը կտարածվեր հասարակության բոլոր անդամների վրա: Սրա մեջ ներառվեցին նաև խոցելի այնպիսի խմբեր, ինչպիսիք էին որբերն ու այրիները: 1215-ին այդպիսի մի փորձ կատարվեց նաև Անգլիայում՝ «Մագնա կարտա»-ն, որով անգլիացի ազնվականները փորձեցին թագավորին բերել օրենքի դաշտ ու ենթարկել նրան օրենքին): Այս փաստաթղթերը փորձ էին

տարբեր հասարակություններում հավասարության ստեղծման համար:

Սակայն մարդու իրավունքների մասին ավելի ակտիվ սկսել են խոսել 2-րդ համաշխարհային պատերազմից հետո: Նացիստական Գերմանիայի կողմից պատերազմի ընթացքում գործած մի շարք հանցագործություններից հետո, որոնք հետագայում որակվեցին մարդկության նկատմամբ հանցագործություններ (դրանցից էին հրեաների, գնչուների ու սինտիների, հաշմանդամություն ունեցող անձանց, նույնասեռականների մասսակայան ոչնչացումը): Սրա պատճառով էր, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Նյուրենբերգում և Տոկիոյում դատավարություններ տեղի ունեցան, և պարտված երկրների պաշտոնյաները պատժվեցին ռազմական հանցագործությունների, «խաղաղության դեմ հանցագործությունների» և «մարդկության դեմ հանցագործությունների» համար: Դեռևս 1941 թվականին Ռուզվելտը (ԱՄՆ 32-րդ նախագահը), իր «Միության վիճակի մասին» ուղերձում խոսում էր 4 հիմնական ազատությունների մասին. խոսքի, կրոնի, վախից ու կարիքից զերծ լինելու ազատությունների մասին:

Երկրորդ աշխարհամարտի արդյունքում պարզ դարձավ նաև, որ Ազգերի լիգան չի կարողանում կատարել իր ստեղծման պահին ստանձնած նպատակներն ու իր առջև դրված խնդիրները: Երկրորդ աշխարհամարտում այն չկարողացավ զսպել ագրեսոր երկրներին, ինչի հետևանքով ճանաչվեց ուժը կորցրած: Այդ իսկ պատճառով 1945 թ.-ին ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ ՄԱԿ), որը դարձավ Ազգերի լիգայի իրավահաջորդը: ՄԱԿ-ի առաջնային նպատակն է ամրապնդել միջազգային խաղաղությունը և կանխել հակամարտությունները: Սակայն այս և մի շարք այլ նպատակներ ապահովելու համար բավարար չէր միայն ՄԱԿ-ի ստեղծումը, անհրաժեշտ էին փաստաթղթեր, որոնք կկանխեին վերոնշյալ հանցագործությունների կրկնությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր ռազակագիրն ու խաղաղությունը

1948-ին ստեղծվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (այսուհետ՝ ՄԻՀՀ): Սակայն այն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում քննարկվել էր դեռևս 1946 թվականին, սակայն այդ ժամանակ այս փաստաթղթի անվանումն այլ էր՝ «Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների հռչակագիր», որը հետագայում դարձավ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»: Փաստաթուղթը բաղկացած է նախաբանից (preamble) և 30 հոդվածներից:

Հենց նախաբանում նշվում է խաղաղության մասին. «*Նկատի ունենալով, որ մարդկության բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի (անհնարին խլել) իրավունքների ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը...*»³²: Այս պարբերությունից հասկանում ենք, որ խաղաղության ապահովման հիմքում ընկած են հենց մարդու իրավունքները, դրանց խթանումը, պաշտպանությունն ու հարգանքը: Դրանց տարածման ու գործարկման շնորհիվ հնարավոր է հասնել խաղաղության: Եվ ինչպես արդեն նշել ենք մարդու իրավունքների պաշտպանությունն արդեն իսկ նպաստում է կամ քայլերից մեկն է դրական խաղաղության ձեռքբերման ու պահպանման:

Հռչակագրի առաջին երկու հոդվածները արձանագրում են, որ բոլոր մարդիկ անկախ իրենց՝ որևէ խմբի պատկանելիությունից (սեռ, կրոն, մշակույթ, լեզու, ազգություն, ռասա և այլն) ունեն փաստաթղթում առկա միևնույն իրավունքները: Կարևոր է իմանալ, որ ՄԻՀՀ-ում ունի հռչակագրային բնույթ՝ այն հիմք է ծառայել մի շարք փաստաթղթերի ստեղծման համար, բայց չունի պարտադրող բնույթ (սա նշանակում է, որ պետությունների համար այն իրավաբանորեն պարտավորեցնող բնույթ չի կրում): Պետությունների համար, որոնք ստորագրել են այս փաստաթուղթը՝ փաստելով դրա գոյությունը, այն պարունակում է որոշակի նվազագույն չափանիշներ՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Այսինքն՝ այս փաստաթուղթը ստեղծում է նվազագույն հիմք այս կամ այն իրավունքի գոյության ու կիրառման

32. Մարդու իրավունքների չամբնջանուի չոշակագիր, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>.

համար, օրինակ՝ ՄԻՀՀ-ն փաստում է, որ գոյություն ունի կրթության իրավունք, և որ այդ իրավունքի իրացումը ենթադրում է տարրական և անվճար կրթություն:

Նշենք, որ հետագայում հենց այս փաստաթղթի հիմքով առաջ քաշվեցին խաղաղությանը վերաբերող այնպիսի բանաձևեր, ինչպիսիք են **«Ժողովուրդների խաղաղության իրավունքի մասին հռչակագիրն» (1984) ու «Հռչակագիր խաղաղության իրավունքի մասին»** բանաձևը (2017)³³: Վերջին փաստաթուղթը բաղկացած է 4 հիմնական հոդվածներից, որոնք հիմնականում խոսում են այն մասին, որ յուրաքանչյուր ոք աշխարհում ունի խաղաղության իրավունք և ժողովուրդների խաղաղության իրավունքի պահպանումը և դրա իրականացման խթանումը յուրաքանչյուր պետության հիմնարար պարտավորությունն է՝ ազգային ու միջազգային մակարդակներում: Այս ամենից դատելով, խաղաղության իրավունքը առնվազն ներառում է³⁴

- կյանքի իրավունք,
- արժանապատվության իրավունք,
- իրավունք՝ իրացնել անհատի համար ստեղծված բոլոր իրավունքները:



Առաջարկ՝ այստեղ կարող է օգտագործվել 8-րդ առաջարկաբանքը («խաղաղության» իրավունքի իմ բանաձևը):

Ինչպես արդեն նշվեց վերևում, ՄԻՀՀ-ն հիմք է ծառայել մի շարք այլ փաստաթղթերի, որոնցում ամրագրվել են այլ իրավունքներ: Այս իրավունքների խմբերը հետագայում կոչվել են իրավունքի սերունդներ: Ըստ այդմ՝ հայտնի են իրավունքի երեք սերունդներ.

1. **Քաղաքացիական և քաղաքական իրավունքները**, որոնք ամփոփված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների

33. UN on the Right to Peace and Right of Peoples to Peace, <https://lhd.org.tr/en/un-on-the-right-to-peace-and-right-of-peoples-to-peace/>.

34. The three key components of the Human right to peace, <https://bit.ly/3rJlaUW>.

մասին միջազգային դաշնագրում (այլ կերպ՝ առաջին սերնդի իրավունքներ)³⁵: Այս սերնդում ներառված են այնպիսի իրավունքներ ինչպիսիք են՝ ժողովուրդների ինքնորոշումը, ապրելու իրավունքը, ստրկությունից ազատությունը, մտքի, խղճի ու կրոնի ազատությունը, խաղաղ հավաքների իրավունք, և այլն: Այս դաշնագիրը ՀՀ կողմից վավերացվել³⁶ է 1993 թ.:

2. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները, որոնք ամփոփված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում (այլ կերպ՝ երկրորդ սերնդի իրավունքներ)³⁷: Այս սերունդը ներառում է այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են առողջապահությունը, արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքը, կրթության, աշխատանքի, հանգստի, մշակութային կյանքի մասնակցելու իրավունքները: Այս դաշնագիրը ՀՀ կողմից վավերացվել է 1993 թվ.-ին:

3. Հավաքական իրավունքներ, որոնք ներառում են բնապահպանական ու մարդասիրական մի շարք խնդիրներ: Հետաքրքրական է, որ այս սերնդի իրավունքները ավելի շատ խմբային են ու ամռնչվում են ժողովուրդներին, ազգերին (բնապահպանական իրավունքներ, խաղաղ ու առողջ ապրելու իրավունք և այլն): Գրականության մեջ հանդիպում է այն միտքը, որ այս սերնդի իրավունքները հիմնականում անհատին դիտարկում են որպես «աշխարհի քաղաքացի»:

Իրավունքի սերունդները դիտարկելիս պարզ է դառնում, որ սրանց մի մասն ապահովում է անհատի բարեկեցությունը պետության ներսում, ինչը խթանում է անձի խաղաղ կենսագործունեությունն պե-

35. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=18500>.

36. Վավերացում - միջազգային փաստաթուղթն ընդունելու և կիրառելու երկու հիմնական փուլեր կան՝ ստորագրում, ինչը նշանակում է, որ պետությունը նախ ճանաչում է այդ փաստաթղթի գոյությունը և միևնույն վավերացումը փորձում է քայլեր ձեռնարկել փոփոխելու ներքին օրենսդրությունը: Երկրորդ փուլը վավերացումն է - երբ պետությունը ստանձնում է որոշակի պարտավորություններ ոչ միայն փոփոխել տվյալ երկրի օրենսդրությունը, այլ նաև քայլեր ձեռնարկել դրա կիրարկման համար:

37. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>.

տության ներսում: Սրանից էլ կարելի է բխեցնել այն հանգամանքը, որ իրավունքները նպաստում են պետությունների ներսում խաղաղությանը և խաղաղ գործունեությանը: Սակայն երրորդ սերունդն ավելի վերաբերական է, քանի որ ամփոփում է մի շարք գլոբալ հիմնախնդիրներ: Այս սերունդներում ներառված իրավունքներն են նաև ներառվում հենց խաղաղության իրավունքը ամրագրող փաստաթղթերում:

Բացի երեք սերնդի իրավունքները, կան նաև առանձին ու հատուկ կամ խոցելի խմբերի իրավունքներն ամրագրող մի շարք փաստաթղթեր, որոնց նպատակն է եղել ի սկզբանե պաշտպանել հասարակության այն շերտերին, որոնց իրավունքները այս կամ այն առիթով ավելի շատ են խախտվում, օրինակ՝ երեխաներ, կանայք, փոքրամասնություններ և այլք:



Առաջարկ - դասի այս մասն ավարտելուց հետո կարող եք կիրառել առաջադրանք 7-ը («**Կարիք ու ցանկություն**»):

Միջազգային մարդասիրական իրավունք

Պատմությանը անցում կատարելով՝ պետք է նշել, որ թվում էր, թե երկրորդ աշխարհամարտից հետո պատերազմներն ու կոնֆլիկտները կանխելու նոր մեխանիզմներն, ինստիտուտներն ու վերոնշյալ փաստաթղթերը ավելի արդյունավետ կլինեն, սակայն, նույնիսկ, 20-րդ դարում պատերազմները շարունակվեցին, ինչի արդյունքում պարզ դարձավ, որ այն փաստաթղթերը, որոնք գրվել էին խաղաղ ժամանակներում, հիմնականում կիրառելի են հենց խաղաղ ժամանակների համար: Ավելին, շարունակվող պատերազմները հանգեցրին մարդու իրավունքների կոպիտ խախտումների: Դրանց կանխումն ու հաղթահարումը ստեղծեց պահանջ՝ մշակելու միջազգային մարդասիրական իրավունքը: Հարկ է նշել, որ պատերազմական իրավիճակներում միջազգային իրավունքի տեսանկյունից մի շարք իրավական փաստաթղթեր դադարում են գործարկվել, դրա փոխարեն կիրառության մեջ են դրվում Միջազգային մարդասիրական իրավունքն ու դրա

կամ ընտրական/ընդհանուր արձանագրությունները: «Ժնևյան կամ բուն մարդասիրական իրավունքը կոչված է պաշտպանելու մարտական գործողությունների ընթացքում վիրավոր զինվորականներին. ինչպես նաև զինված գործողություններին չմասնակցող անձանց»³⁸: «Հինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային մարդասիրական իրավունք» ասելով՝ ենթադրվում են միջազգային պայմանագրային կամ ավանդույթային այն նորմերը, որոնք հատուկ նախատեսված են միջազգային³⁹ կամ ոչ միջազգային (ներպետական) բնույթի զինված ընդհարումների հետևանքով առաջացող և մարդասիրական առումով մտահոգություն պատճառող խնդիրները կարգավորելուն⁴⁰: Ելնելով փաստաթղթի բովանդակությունից՝ երկու կողմերի միջև հակամարտության ժամանակ սահմանափակվում է կողմերի՝ իրենց ընտրությամբ պատերազմելու մեթոդներ և միջոցներ կիրառելու ազատությունը, և պաշտպանվում է ընդհարումից տուժած կամ նման սպառնալիքի տակ հայտնված մարդկանց կյանքը և գույքը:

Այս փաստաթղթերով մի շարք իրավունքներ, որոնք խաղաղ ժամանակներում արդիական են, հետ են մղում և/կամ կիրառելի չեն լինում: Այդպիսի իրավունքներից մեկը ազատ տեղաշարժվելու իրավունքն է: Սակայն կան իրավունքներ, որոնք այնուամենայնիվ շարունակում են լինել միջազգային մարդասիրական իրավունքի կարգավորման առարկա: Այդ իրավունքներից են առողջապահության, կրթության և մի քանի այլ իրավունքներ: Միջազգային մարդասիրական իրավունքը պաշտպանում է երեխայի կրթության իրավունքը՝ դուրս բերելով իրավիճակային դրույթներ, որոնցում հնարավոր է կրթության իրավունքի խախտում: Պետությունը պարտավորվում է խթանել երեխայի կրթության իրավունքի պաշտպանությունը հետևյալ իրավիճակներում. առանց ծնողական խնամքի մնացած (ԱՃԽՄ) կամ խնամակալ չունեցող երեխաներ. «հակամարտության կողմերը պետք է ձեռնար-

38. («Միջազգային մարդասիրական իրավունքի շարգայումս Ու Սկզբունքները», 2000):

39. Միջազգային բնույթի զինված ընդհարումն առնվազն երկու պետությունների զինված ուժերի բախումն է (հարկ է նշել, որ ազգային-ազատագրական պատերազմները նույնպես դիտվում են որպես միջազգային բնույթի զինված ընդհարումներ) [redcross.am/what-we-do/information-and-dissemination/information_current_projects/what-is-ihl.html](https://www.redcross.am/what-we-do/information-and-dissemination/information_current_projects/what-is-ihl.html):

40. Ինչ է Միջազգային մարդասիրական իրավունքը, <https://bit.ly/366JtGO>:

կեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու մինչև տասնհինգ տարեկան երեխաներին, որոնք որք են կամ բաժանված են իրենց ընտանիքից պատերազմի հետևանքով, սեփական միջոցների հաշվին չմնալը, և որ նրանց պաշտպանությունը, դավանանքը և կրթությունը ոչուրին կերպով հասանելի լինի ցանկացած պայմաններում: Նրանց կրթությունը, որքանով հնարավոր է, պետք է վստահվի նմանատիպ կամ նույն մշակութային ավանդույթը կրող անձանց»⁴¹: Նշենք, որ Միջազգային մարդասիրական իրավունքը կիրառելի է միայն հակամարտության կամ պատերազմի ընթացքում, իսկ դրա ավարտից հետո նորից ուժ են ստանում մեզ արդեն հայտնի հիմնական փաստաթղթերը: Ցավով նշում ենք, որ նույնիսկ այս փաստաթղթի գոյությունը չի սահմանափակում հակամարտող կողմերին, խախտել այնպիսի իրավունքներ ու դրույթներ, որոնք ամրագրված են վերոնշյալ փաստաթղթում: Այսպիսի օրինակ էր 44-օրյա պատերազմի ժամանակ Լեռնային Ղարաբաղում ապրող ու հետագայում տեղահանված երեխաների օրինակը: Այսպես՝ բուն ռազմական գործողությունների օրերին ու դրան հաջորդող ամիսներին մոտավորապես 20,000-25,000 երեխա զրկված է եղել կրթություն ստանալու իրավունքից⁴²:

Այսպիսով՝ շարունակական խաղաղության հասնելու գործոններից ամենակարևորներն են՝ քաղաքացիական բռնության տարածվածությունն ու կրկնությունը մեր ժամանակներում, ինչպես նաև հետաքրքրության ստեղծումը մարդու իրավունքների նկատմամբ, դրանց վերաբերյալ դիսկուրսի ստեղծումը: Դե իսկ խաղաղության կառուցման ներկայիս մեթոդական գործիքակազմերը ներառում են աջակցություն քաղաքացիական հասարակությունների վերականգնմանը, մարդու իրավունքների պաշտպանության մշակույթի խթանմանը, իրավապահ համակարգերի վերակառուցմանը և անկայուն քաղաքական և սոցիալական միջավայրերում Էթնիկ հաշտեցմանը:



Առաջարկ՝ դասի այս մասն ավարտելուց հետո կիրառեք

41. (IV Geneva Convention Relative to the Protection of Civilian Persons in Time of War of 12 August, 1949):

42. 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով Հայաստան տեղափոխված երեխաների կրթության և պաշտպանվածության կարիքների գնահատման զեկույց, <https://bit.ly/3KVNDzS>:

առաջադրանք 6-ը («խաղաղությունից իրավունք - իրավունքից խաղաղություն»):

● Հարցեր ?

Այս հարցերի միջոցով կկարողանաք ամփոփել դասը, դրանց հիմքով տալ էսսեներ, ստուգել, թե սովորողները որքանով կարողացան յուրացնել դասը կամ դասերը, ստեղծել քննարկումներ ու լսել նրանց կարծիքները՝ թեմայի վերաբերյալ:

- Ե՞րբ առաջացավ կարիքը ստեղծելու Միավորված ազգերի կազմակերպությունը, ո՞րն էր դրա պատճառը:
- Ինչո՞վ էր պայմանավորված (ո՞րն էր դրա կարիքը) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ստեղծումը:
- Ներկայացրե՞ք խաղաղության իրավունքը, ի՞նչ այլ իրավունքներ են ներառված այս իրավունքի մեջ:
- Ո՞րն է միջազգային մարդասիրական իրավունքի նպատակը: Ի՞նչ իրավունքներ կան, որոնք, այնուամենայնիվ, պաշտպանվում ու չեն սահմանափակվում պատերազմների ժամանակ:
- Իրավունքները ու դրա պաշտպանությունը լիակատար խաղաղություն ենթադրու՞մ են: Բացատրեք Ձեր պատասխանը:

ԹԵՄԱ 2.3

Ժողովրդավարություն ու խաղաղություն



Նպատակ՝

Ծանոթանալ ժողովրդավարության արժեքներին ու սկզբունքներին՝ բացատրելով ժողովրդավարության դերը խաղաղության տարածման ու զարգացման գործում:



«... ի վերջո մեր անվտանգության ապահովման լավագույն ճանապարհն ու շարունակական խաղաղության ապահովման լավագույն ռազմավարությունը՝ ժողովրդավարության զարգացումն է: Ժողովրդավար երկրները /Ժողովրդավարությունները իրար վրա չեն հարձակվում» (Բիլ Զլինթոն, 1994)

մեջբերումը առանձնացնել ընդհանուր տեքստից

Ժողովրդավարական արժեքներ

«Ժողովրդավարության» մասին առաջին հիշատակումները մշտապես առնչվում են Հին Հունաստանի, մասնավորապես Աթենքի հետ, իսկ հետագայում Ամերիկայի առաջին Նախագահի՝ Ջորջ Վաշինգտոնի, ընտրության հետ: Ըստ այդմ, Աթենքի, որպես քաղաք-պետություն, հռչակումից հետո պետությունը կառավարում էին հարուստները, որը դուր չէր գալիս հասարակ բնակչությանը: Մ.թ.ա մոտ 2700 տարի առաջ այս բնակչությունը պահանջեց, որ փոխի վերոնշյալ կարգը՝ պնդելով այն հանգամանքը, որ իրենք ևս կարող են իրականացնել պետության կառավարումը⁴³: Սա ժողովրդավարության առաջին դրսևորումն էր, որը ներկայիս ժողովրդավարությունից բավականին հեռու էր: Ըստ Բրիտանիկա հանրագիտարանի՝ «**Ժողովրդավարությունը** կառավարման համակարգ է, որտեղ օրենքները, քաղաքականությունը, ղեկավարությունը և պետությունը կամ այլ միավորում ուղղակիորեն կամ անուղղակիորեն որոշվում ու ձևավորվում է «մարդկանց» կողմից՝ մի խումբ, որը պատմականորեն կազմված է եղել բնակչության միայն փոքրամասնությունից (օրինակ՝ Հին Աթենքում ազատ էին համարվում չափահաս տղամարդիկ, կանայք չունեին կառավարմանը մասնակցելու իրավունք, կամ 19-րդ դարի Բրիտանիայում բավարար չափով ունեցվածքի տեր չափահաս տղամարդիկ, բայց ընդհանուր առմամբ 20-րդ դարի կեսերից հասկացվում էր, որ վերոնշյալ սահմանումը ներառում է բոլորին (կամ գրեթե բոլոր)՝ տվյալ տարածքի կամ երկրի չափահաս քաղաքացիներին»⁴⁴:

Ինչպես յուրաքանչյուր երևույթ ու գաղափար, ժողովրդավարությունը ևս ունի արժեքներ, որոնք հիմք են դարձել դրա՝ որպես գաղափարի, և ժողովրդավարեցման՝ որպես գործընթացի: Ըստ այդմ, այս գաղափարի ու գործընթացի երեք հիմնական արժեքներն են.

- **Ազատություն.** Ժամանակակից աշխարհում ազատությունը հասարակության ներսում ազատ լինելու վիճակն է, հատկապես վերահսկողությունից կամ ճնշող սահմանափակումներից ազատ լինելու, որոնք պարտադրվում են իշխանության կողմից մարդու կյանքի ձևի, վարքագծի կամ քաղաքական հայացքներ-

րի վրա⁴⁵:

- **Հավասարություն.** յուրաքանչյուր ոք պետք է արժանանա նույն վերաբերմունքին՝ անկախ նրանից, թե որտեղ են ծնվել իրենց ծնողները կամ տատիկներն ու պապիկները, իրենց ռասայից, կրոնից կամ որքան գումար ունեն: Քաղաքացիները՝ բոլորն ունեն քաղաքական, սոցիալական և տնտեսական հավասարություն⁴⁶:
- **Արդարություն.** այն ընդգծում և կարևորում է արդար և անաչառ վերաբերմունքը յուրաքանչյուրի նկատմամբ՝ համաձայն ընդունված բարոյական կամ արդար վարքի⁴⁷:

Բացի հիմնաքարային համարվող այս արժեքների, կան նաև մի շարք այն արժեքները, որոնք բնութագրում են ժողովրդավարությունը և կազմում դրա արժեքային շրջանակը՝ պաշտպանություն, համընդհանուր/հանրային շահ, ճշմարտություն, բազմազանություն, ժողովրդական իշխանություն, հայրենասիրություն (հայրենասիրությունը⁴⁸ կարող է սահմանվել որպես սեր դեպի սեփական երկիրը, նույնականացում նրա հետ և առանձնահատուկ հոգատարություն նրա և հայրենակիցների բարօրության համար):

Իդեալական ժողովրդավարությունը, որպես գաղափար, ունի հետևյալ չափանիշներն ու հատկանիշները⁴⁹.

- արդյունավետ մասնակցություն;
- ընտրության ընթացքում/մեջ հավասարություն;
- իրազեկ ընտրազանգված;
- օրակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն;
- ներառականություն;
- հիմնարար իրավունքների իրացում և պաշտպանություն:

Հիմնական նպատակները, որոնց համար ժողովուրդը ստեղծում

45. Liberty, <https://bit.ly/3F3VUyx>.

46. Core Democratic Values Defined, <https://bit.ly/34tklDj>:

47. Difference Between Equality and Justice, <https://bit.ly/3f7W50Z>:

48. Patriotism, Stanford Encyclopedia of Philosophy, <https://stanford.io/3Hljn0>.

49. Democracy, <https://www.britannica.com/topic/democracy>.

Է ժողովրդավարական իշխանություն, իր իրավունքների, շահերի և բարօրության պաշտպանությունն ու առաջնությունն է: Ժողովրդավարությունը պահանջում է, որ յուրաքանչյուր անհատ ազատ լինի մասնակցել համայնքի կառավարմանն ու ինքնակառավարմանը: Սակայն տարբեր ժամանակներում ժողովրդավարությունը բավարար չափով հավասար ու մասնակցային չի եղել, օրինակ աշխարհի տարբեր երկրներում մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը կանայք դեռևս հասարակական-քաղաքական կյանքին ու մասնավորապես ընտրություններին մասնակցելու իրավունք չունեին, մինչև 20-րդ դարի կեսը սևամորթները ևս ընտրության ու քաղաքական մասնակցության իրավունք չեն ունեցել (սահմանափակ են եղել նրանց քաղաքական-քաղաքացիական իրավունքները): Այս խնդիրը կապված է եղել մեկ այլ իրավունքի հետ՝ այս երկու խմբերը ունեցվածք ձեռք բերելու և պահպանելու իրավունք չեն ունեցել, իսկ այդ ժամանակահատվածում ընտրելու իրավունք են ունեցել բացառապես ունեցվածքատերերը: Այսպես 19-րդ դարի կեսերին սկսվել է կանանց պայքարը՝ իրենց ընտրական ու մի շարք այլ իրավունքների համար, և 1893-ին Նոր Զելանդիան ու հետագայում այլ երկրներ ճանաչեցին կանանց ընտրական ու մի շարք այլ իրավունքներ (նշենք, որ 20-րդ դարի սկզբերին, մասնավորապես 1918 թվ-ից ՀՀ առաջին հանրապետության կազմավորման ընթացքում, խորհրդարանում արդեն կար 3 կին պատգամավոր, ինչպես նաև 1920 թվ. Դիանա Աբգարը դարձավ կին առաջ դիվանագետը, ով նշանակվեց Ճապոնիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ)⁵⁰: 20-րդ դարի կեսերին, (1964 թվականին) Քաղաքացիական իրավունքների մասին ակտի ընդունումը և եռանդուն կիրառումը սևամորթներին ևս ներգրավեց «ամերիկայի դեմոս (ժողովուրդ)» բառակապակցության տակ⁵¹:



Առաջարկ՝ Դասի այս հատվածն ավարտելիս կարող եք կիրառել վարժություն 9-ը («Անցիր շրջանը»):

Ժողովրդավարության ու խաղաղության կապը

Խաղաղությունը և ժողովրդավարությունը համամարդկային և հարակից արժեքներ են. երբ մեկը բացակայում է, մյուսը վտանգված է:

Դրանց հասնելը հեշտ չէ, դրանք զարգանում են աստիճանաբար ու շարունակական աշխատանքի և գործընթացների միջոցով՝ ինստիտուտների կերտմամբ ու զարգացմամբ: Օրինակ՝ ուժեղ ինստիտուտները ստեղծում են լավ օրենքները, իսկ լավ օրենքները ներգրավված քաղաքացիների ձեռքբերումն են ու նրանց կյանքի որակին են նպաստում:

Ժողովրդավարության ու խաղաղ փոխհարաբերություններն ու փոխկապակցվածությունը ուսումնասիրության առարկա են եղել տարբեր ժամանակների ակադեմիական շրջանակների կողմից: Ուսումնասիրության ու քննարկումների առանցքային հարցերից են՝ «արդյո՞ք ժողովրդավարությունն ինքնին լավ է խաղաղության և դրա հաստատման համար» և «գուցե խաղաղությունն է բերում ժողովրդավարություն»: Այս հարցերի վերաբերյալ առաջին անգամ խոսել է Էմանուել Կանտն իր «Ժողովրդավարական խաղաղություն» տեսության մեջ, համաձայն այս տեսության որքան ժողովրդավար է ռեժիմը այնքան ավելի քիչ է հակված ներգրավվել կոնֆլիկտի մեջ⁵²: Մեկ այլ ակադեմիկ՝ Դեն Ռեյթերը իր հոդվածում նշում է, որ՝ «Ժողովրդավարությունը խաղաղության հետևանք է», շարունակելով Կանտի տեսությունը և հակադրվելով այն գիտնականներին, ովքեր պնդում էին, որ այս երկուսի միջև կապ ընդհանրապես չկա, նշում է, որ, նախ, կան բավարար ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ ժողովրդավարությունը խաղաղություն է բերում, առնվազն ժողովրդավարական երկրների միջև, և, երկրորդը, առաջ է քաշում այն գաղափարը, որ մի քանի գործոններ կան (ներառյալ ժողովրդավարությունը), որոնք բերում են խաղաղության, և որ ժողովրդավարության ու խաղաղության գործոնների միջև պատճառահետևանքային կապ կա, հավանաբար, այդ կապը երկկողմանի է⁵³: Սակայն կարևոր է նշել նաև, որ, նույնիսկ, ժողովրդավարական պետությունների ու իշխանությունների միջև կարող է կոնֆլիկտ կամ հակամարտություն ծագել: Ժամանակակից աշխարհում ժողովրդավարությունը առերեսվում է որոշակի խնդիրների, որոնք հանգեցնում են նաև համաշ-

52. Democratic Peace Theory, <https://bit.ly/3GjXr52>.

53. Dan Reiter, Is Democracy a Cause of Peace?, <https://bit.ly/3Fe8HOR>.

խարհային ու տեղական մակարդակներում խաղաղության խաթարմանը, այս երևույթներից առավել ակներև են⁵⁴.

- **Ռեսուրսների անբավարարությունը.** տարբեր երկրների՝ ավելի հարուստ ու աղքատ լինելը, տնտեսական անհավասարություններն ու գործազրկությունը:
- **Միգրացիան.** այն ի հայտ է եկել հնագույն ժամանակներից, սակայն առավել հայտնի է դարձել Երկրորդ Աշխարհամարտի ժամանակ: Ժամանակակից աշխարհում միգրացիայի պատճառներից են շարունակական կոնֆլիկտները, ռազմական գործողություններն ու պատերազմները, ինչպես նաև աղքատ և միջին եկամուտ ունեցող երկրների բնակիչների՝ «լավ կյանքի» նկատմամբ պատկերացումները:
- **Ահաբեկչությունը.** այն ավելի մեծ տարածում գտավ 1970-ականների՝ ժողովրդավարական երկրներում ու դրանց նկատմամբ: Ահաբեկչությունն առաջանում է հիմնականում հանդուրժողականության պակասի ու ատելության հիմքով:

Ինչպես նկատում ենք այս երևույթներն ու գործողությունները սա-սանում են ժողովրդավարության դիրքերը աշխարհում սերմանելով բացասական զգացումներ ու տարածելով հակաժողովրդավարական արժեքներ: Սա էլ իր հերթին խաթարում է խաղաղությունն աշխարհում առաջ բերելով ռեսուրսների համար պայքար, ուժի կիրառում և բռնություն:

Կա նաև մեկ այլ խնդիր՝ երբեմն ժողովրդավարությունը նույնիսկ երկրի ներսում խաղաղություն չի երաշխավորում: Ինչպես արդեն գիտենք ժողովրդավարության հետ են կապվում «դեմոս» (ժողովուրդ)՝ ժողովրդի իշխանություն, և «Էթոս» (միևնույն մշակույթը կիսող մարդկանց խումբ, որը տարբեր է մյուս մշակույթից) տերմինների հետ: Սակայն դրանք երբեմն սխալ են մեկնաբանվում և մեկ խմբի շահերը դառնում են գերակա մյուսի նկատմամբ, այնինչ ժողովրդավարությունը՝ մեծամասնության ընտրությունն ու փոքրամասնու-

54. Democracy, <https://www.britannica.com/topic/democracy>.

յանն իրավունքների և շահերի պաշտպանությունն է: Ներկայումս աշխարհի տարբեր ծայրերում ապրող փոքր խմբերի՝ փոքրամասնությունների կամքը, շահն ու իրավունքները ստորադասվում են, ինչը հանգեցնում է սոցիալական և քաղաքական լարվածության և հաճախ բռնությունների ծագման:

Սրանից բխում են նմանօրինակ հարցեր, օրինակ՝ ի՞նչ որակի է ժողովրդավարությունն այս կամ այն երկրում, որքանո՞վ է ժողովրդավարությունը ներառող այս կամ այն երկրում, արդյո՞ք ժողովրդավար երկրները լուրջ են մոտենում «դրական ժողովրդավարությանը» և այլն:

Այնուամենայնիվ կայուն խաղաղության համար ժողովրդավարական ինստիտուտները պետք է մաս կազմեն կառավարման նոր մոդելի ստեղծմանը: Նրանք նաև պատրաստակամ պետք է լինեն այդ մոդելի ստեղծման համար: Ժողովրդավարական ինստիտուտներն ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում հակամարտությունների ոչ բռնի լուծմանը: Այն ապահովում է քաղաքական խնդիրների ռացիոնալ քննարկման և թշնամական կողմերի միջև հակասական սոցիալական շահերի կարգավորման հարթակ: Ի հավելումս, պատմականորեն ապացուցված է, «Ժողովրդավարությունը կառավարման ամենահարմար մոդելն է քաղաքացիական հակամարտությունը լուծելու և դրա կրկնությունը կանխելու համար, ինչպես նաև երկարաժամկետ հակամարտությունը դադարեցնելու համար»:⁵⁵



Առաջարկ՝ թեման ամփոփելու համար կարող եք օգտագործել վարժություն 10-ը («Քննարկում/հետազոտական աշխատանք»):

Ժողովրդավարություն ու խաղաղարարություն⁵⁶

Աշխարհում խաղաղապահ առաքելությունները փորձում են դադարեցնել

55. Peacebuilding and human rights - an agenda for democratic transformation, <https://bit.ly/3Bflsbl>:

56. Christoph Zürcher, The Oxford Handbook of Peacebuilding, Statebuilding, and Peace Formation, <https://bit.ly/33flhPs>.

արեցնել ռազմական գործողություններն ու պատերազմները: Նրանք նաև փորձում են հաստատել ժողովրդավարական կարգեր այդ առաքելության շրջանակներում: ՄԱԿ-ի կողմից դուրս է բերվել հետևյալ սահմանումը. «խաղաղապահները մշտադիտարկում և հետևում են խաղաղ գործընթացներին հետևոնֆիլիտային տարածքներում և կարող են օգնել նախկին զինյալներին՝ իրականացնելու խաղաղության համաձայնագրի պարտավորությունները, որոնք նրանք ստանձնել են: Նման օգնությունը կարող է լինել տարբեր՝ ներառյալ վստահության ամրապնդման միջոցառումները, իշխանության բաշխման պայմանավորվածությունները, ընտրական աջակցությունը, օրենքի գերակայության ամրապնդումը և տնտեսական և սոցիալական զարգացումը»⁵⁷:

Հետաքրքրական է, որ երբեմն այս առաքելություններն ունենում են հաջողություն պատերազմի կամ ռազմական գործողությունների դադարեցման տեսանկյունից, սակայն նրանց ջանքերը ժողովրդավարության հասնելու տեսանկյունից պսակվում են անհաջողությամբ: Աշխարհում ներկայումս կա թյուրըմբռնում այն մասին, որ ժողովրդավարացումը հանդիսանում է անվտանգության պահպանմանն ուղղված ռիսկ, ինչը հանգեցնում է ժողովրդավարության նկատմամբ հավատի և վստահության նվազման: Սա օգտագործվում է իշխանության ձգտող այնպիսի խմբերի կողմից, որոնք չեն ուզում կորցնել իրենց ուժն ու ազդեցության շրջանակը: Այսպիսի առաքելություն իրականացրել են ՄԱԿ-ի խաղաղապահ զորքերը 1999 թվականին: Այս զորքի մի մասը մոտավորապես 355 հոգի դեռևս Կոսովոյում է: Սակայն Կոսովոյի ժողովրդավարեցման մակարդակը դրանից չի ազդվում, ավելին՝ տարբեր ինդեքսներ նշում են, որ 2020թ-ի տվյալներով կառավարությունը՝ կռալիցիայով, չի կարողանում երկիրը կառավարել: Այն համարվում է անցումային⁵⁸ մակարդակում գտնվող պետություն, նշանակում է, որ խաղաղարար առաքելությունը կարող է քիչ կապ ունենալ թե՛ ժողովրդավարության, թե՛ խաղաղաշինության

57. Peacekeeping, <https://bit.ly/3FNtrqE>.

58. Անցումային երկիր, <https://bit.ly/359D4IT>.

հետ⁵⁹:

Սակայն հարկ է նշել, որ հենց ժողովրդավարությունն ու դրա միջոցով պետական կառույցների ուժեղացումն է տանում դեպի կոնֆլիկտի ոչ բռնի լուծման ու շարունակական զարգացման միջոցով «դրական խաղաղության ձեռքբերման»: Այս դեպքում կարևոր են երկխոսությունն ու բանակցությունները, միայն եթե երկու կողմն էլ պատրաստ են ժողովրդավարական ու ոչ բռնի միջոցներով լուծել խնդիրը: Խաղաղությունը պահանջում է սոցիալական ու հասարակական վերափոխում, այսինքն՝ ինքը հասարակությունը պետք է պատրաստ լինի խաղաղության ու կոնֆլիկտների ոչ բռնի լուծման, որն էլ իր հերթին նշանակում է քայլեր ձեռնարկել դեպի կայուն զարգացում, քանի որ ռազմական ու բռնի գործողությունները ունենում են բացասական ազդեցություն թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ մշակութային զարգացման վրա⁶⁰: Այսպիսի զարգացման ուղի բռնած երկրների օրինակներ են՝ Ֆիլիպինյան, Իսլանդիան, Նորվեգիան: Սրանք նաև ըստ Freedom House-ի ինդեքսների⁶¹ համարվում են աշխարհի ամենաժողովրդավար երկրները, ինչպես նաև ներգրավված չեն որևէ կոնֆլիկտում, ինչի արդյունքում հասել են իրական խաղաղության:



Առաջարկ՝ Դասն ավարտելուց հետո կարող եք այն ամփոփել վարժություն 11-ով (Քննարկում):

59. Խաղաղաշինության ու խաղաղարար առաքելության տարբերությունը.

«- խաղաղարարությունը թշնամական կողմերին համաձայնության բերելու գործողություն է; խաղաղապահությունը Միավորված ազգերի կազմակերպության ռազմական և քաղաքացիական ներկայության տեղակայումն է դաշտում՝ ընդլայնելու հնարավորությունները ինչպես հակամարտությունը կանխելու, այնպես էլ խաղաղություն հաստատելու համար;

Խաղաղաշինությունը գործողություն է՝ բացահայտելու և աջակցելու այն կառույցներին, որոնք հակված են ամրապնդելու և ամրապնդելու խաղաղությունը՝ խուսափելու հակամարտությունների կրկնությունից» <https://bit.ly/33GWF5i>:



Այս հարցերի միջոցով կկարողանաք ամփոփել դասը, դրանց հիմքով տալ էսսեներ, ստուգել, թե սովորողները որքանով կարողացան յուրացնել դասը կամ դասերը, ստեղծել քննարկումներ ու լսել նրանց կարծիքները՝ թեմայի վերաբերյալ:

Որտե՞ղ առաջացավ ժողովրդավարությունը, ինչպիսի՞ առաջխաղացում ունեցավ:


Որո՞նք են ժողովրդավարության արժեքները, ի՞նչ դեր ունի խաղաղությունը ժողովրդավարացման գործընթացում:

Ի՞նչ տարբեր կարծիքներ կան ժողովրդավարության ու խաղաղության վերաբերյալ: Մեկնաբանե՞ք Ձեր կարծիքը, ո՞ր գաղափարին եք Ղուք հակված:

Որո՞նք են այն հիմնական մարտահրավերները, որոնց առաջ կանգնած է ժողովրդավարությունն այսօր: Ինչպե՞ս է այն կապված խաղաղության հետ:

Խաղաղապահ առաքելությունները հանգեցնու՞մ են հարատև խաղաղության, նրանք բերու՞մ են ժողովրդավարության: Բերե՞ք օրինակներ:







● Վարժություն 1- «Սկզբունքների խաղ»⁶²

Այս վարժությունը խորհուրդ է տրվում կատարել մարդու իրավունքների հիմքում ընկած արժեքները ճանաչելու, դրանք ուսումնասիրելու և խաղաղությունը դրանց մեջ դասելու համար:

Վարժությունը կատարեք խմբերով՝ բաժանելով սովորողներին խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է դիտարկի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի տասը հոդվածներ (Հռչակագրի տեքստը հայերենով և ամբողջական տարբերակով կգտնեք հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf): Օրինակ՝ մի խումբ կարող է ուսումնասիրել 1, 7, 10, 13, 16, 22, 25, 28 հոդվածները: Երկրորդ խումբը կարող է ուսումնասիրել 2, 5, 11, 14, 17, 20, 23 հոդվածները: Եվ երրորդ խումբը կարող է ուսումնասիրել 3, 6, 9, 18, 21, 27, 30, իսկ չորրորդ խումբը՝ 4, 8, 12, 15, 19, 24, 26, 29 հոդվածները: Սովորողները պետք է ուսումնասիրեն այս հոդվածները՝ մտքում ունենալով բացահայտել, թե ինչ սկզբունքներ են ընկած այդ հոդվածների հիմքում: Յուրաքանչյուր խումբ վերջում պետք է ներկայացնի քննարկման արդյունքները:

Հուշում. եթե կգաք, որ երեխաները դժվարանում են այս հոդվածները ընթերցել և սկզբունքները դուրս բերել, առաջարկեք նրանց հետևյալ սկզբունքները համաձայնեցնել տրված հոդվածներին.

- Պատասխանատվություն
- Արդարություն
- Ազատություն

62. Human Rights Library, <http://hrlibrary.umn.edu/education/pihre/partone.htm>.

- Հավասարություն
- Հանդուրժողականություն
- Համերաշխություն
- Անվտանգություն
- Ինքնություն
- Խաղաղություն

● Վարժություն 2 - «Աստիճանակարգում»⁶³

Այս մեթոդն օգտակար է կիրառել այն դեպքում, երբ ցանկանում եք որոշակի տեղեկություններ տրամադրել կամ նպատակային քննարկում հրահրել փոքր խմբերում: Դուք պետք է պատրաստեք համապատասխան տեղեկություններով քարտերի մեկական փաթեթ յուրաքանչյուր փոքր խմբի համար: Յուրաքանչյուր փաթեթում պետք է լինի ինը քարտ: Պատրաստեք ինը կարճ, պարզ դատողություններ այն թեմայի վերաբերյալ, որ կցանկանայիք քննարկել, և ամեն քարտի վրա մեկ դատողություն գրեք:

Խմբերը պետք քննարկեն դատողությունները, և ապա աստիճանակարգեն դրանք՝ ըստ կարևորության: Դա կարելի է անել կամ սանդուղքի, կամ ադամանդի տեսքով: Աստիճանային դասակարգման մեջ ամենակարևոր նախադասությունը գրվում է ամենավերևում, հաջորդը, ըստ կարևորության, դրա տակ, և այդպես շարունակ՝ մինչև ներքևի ամենաանկարևորը:

Ադամանդի աստիճանակարգման մեջ մարդիկ քննարկում են, թե որն է առավել կարևոր դատողությունը, ապա՝ հաջորդ երկու ամենակարևորները, այսուհետև՝ միջին կարևորության հաջորդ երեքը և այլն, ինչպես պատկերված է սխեմայում: Քանի որ հարցերը հազվադեպ են հստակ տարբերակված, ադամանդի աստիճանակարգումը հաճախ ավելի նպատակահարմար մեթոդ է: Այն պակաս խճճված է և

63. «Ուղեցույց», Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ծեռնարկ - Եվրոպայի խորհուրդ, 2001, էջ 54:

այդ պատճառով առավել ընդունելի մասնակիցների համար: Այն նաև ավելի լավ հնարավորություններ է ընձեռում միասնական որոշման հանգեյլու համար: Աստիճանակարգման մեկ այլ տարբերակ է՝ գրել ութ դատողություններ ու մի քարտը դատարկ թողնել, որ մասնակիցներն իրենք լրացնեն այն:

Սանդուղքի
աստիճանակարգ

Ամենակարևորը
Ամենաանկարևորը

Աղամանդի
աստիճանակարգ

Ամենակարևորը		
Ամենաանկարևորը		

● Վարժություն 3 - «Անարդար իրավիճակներ»⁶⁴

Կարող է օգնել գեներացնել գաղափարներ կոնֆլիկտի, խաղաղության վերաբերյալ: Սովորաբար տրվում է 45-60 րոպե, բայց կարելի է ժամանակահատվածը կրճատել մինչև է 10-15 րոպե:

Սովորողներին տրամադրեք տարբեր անարդար իրավիճակների լուսանկարներ և պատկերներ՝ վերցված ամսագրերից, թերթերից, կայքերից կամ այլ վայրերից: Օրինակները կարող են ներառել զինված հակամարտության, աղքատության և անօթևանության, աղտոտվածության, կրոնական անհանդուրժողականության, գեղդերային բռնության, թմրանյութերից կախվածության, շրջակա միջավայրի

64. ADOLESCENTS AS PEACEBUILDERS TOOLKIT, p. 64, <https://www.unicef.org/media/59166/file> (որոշակի քայլեր փոփոխվել ու ադապտացվել են դասընթացի կոնտեքստին):

ոչնչացման, միգրացիայի և այլնի պատկերներ: Փակցրեք այդ նկարները դասարանի պատերին և խնդրեք, որ աշակերտները շրջեն դասարանում ու դիտեն նկարները:

Քայլեր.

1. Մասնակիցները շրջում են և նայում պատկերները: Սկսեք քննարկում այն մասին, թե ինչպես են մասնակիցները զգում՝ նայելով յուրաքանչյուր նկարին, ի՞նչ պատկերներ են գրավել նրանց ուշադրությունը և ինչու՞:
2. Հարցեր տվեք պատկերների մասին, թե որոնք գրավեցին նրանց ուշադրությունը: Խնդրեք մասնակիցներին նկարագրել, թե ինչ կարող էր տեղի ունենալ, ինչու է դա տեղի ունեցել, ով է պատասխանատու իրավիճակի համար, ինչն է պատճառը, որ նկարում եղած մարդը նման արտահայտություն ունի իր դեմքին, ինչ կարող է նա մտածել և զգալ, ինչ կարող է լինել նրանց հետ հիմա և այլն:
3. Խոսեք արժեքներից, որոնք խախտվել և ոտնահարվել են այդ նկարներում, հարցրեք, թե մասնակիցները այդպիսի որևէ տեսարանի ականատես եղել են, ինչպիսի զգացումներ են ունեցել:

● Վարժություն 4 - «Նկարների փոխանակում/կիսում»

Խաղի նպատակն է նախորդ վարժությունից ելնելով սովորողներն իրենց համայնքից կամ ապրած իրավիճակից գտնեն նկարներ, որոնք արտացոլում են այս կամ այն արժեքները կամ դրանց խախտում: Վարժությունը կարող է օգտագործվել որպես տնային աշխատանք պատկերները/նկարները գտնելու համար, իսկ քննարկումներ կատարել դասարանում, որպես վարժության ամփոփում:

Խնդրեք մասնակիցներին, որ մինչև հաջորդ դասը ուսումնասիրեն իրենց միջավայրերը, որոնցում ապրում են, դիտարկելով արժեքները,

որոնք ընկած են մարդու իրավունքների հիմքում և կան իրենց համայնքներում: Նշեք, որ դրանք կարող են լինել թե՛ ապահովված արժեքներ, թե՛ բացակայող ու իրավիճակային: Խնդրեք, որ լուսանկարեն այդ տեսարանները և մյուս դասին կիսվեն իրենց դասընկերների հետ դրանցով՝ պատմելով, թե ինչու են արել այդ նկարները, ինչ ասոցիացիաներ են տեսնում նրանք և ինչ զգացումներ ունեն:

● Առաջադրանք 5 - «Վերլուծելով Մարթին Լյութեր Քինգի ելույթները»

Այս վարժության նպատակն է զարգացնել աշակերտների վերլուծական մտածողությունը: Տրվում են Մարթին Լյութեր Քինգի խոսքերը տարբեր ելույթներից և աշակերտները նախ պետք է ստանան կարճ առաջադրանք (բաժանեք 3-4 խմբի ըստ աշակերտների թվի)՝ տեղեկություններ հավաքել նրա վերաբերյալ և առանձնացնել 5 կետեր, որոնք ամենից հետաքրքիրն էին Քինգի կյանքում, ինչպես նաև բացատրել, թե ինչով են դրանք հետաքրքիր կամ կարևոր:

Բացի այդ բաժանեք առանձնացված հատվածները աշակերտներին՝ խնդրելով, որ կարդան ու պատասխանեն հետևյալ հարցերին.

1. Համաձայն են արդյոք հետևյալ մտքի հետ. *«Այն ինչ ուղղակի վիրավորում է մեզ, անուղղակի կերպով ազդում է այլոց վրա»*: Խնդրեք, որպեսզի բացատրեն իրենց տեսակետը: Եթե կապատասխանեն այդ, հարցին ավելացրեք՝ բերել օրինակներ:
 - Այո, որովհետև.....
 - Ոչ, որովհետև.....

Օգտագործեք այս կետը անցնելու մյուս մեջբերումներին.

Մեջբերումներ.

Մենք չենք կառուցի խաղաղ աշխարհ՝ հետևելով բացասական ճանապարհին. «Մենք չպետք է պատերազմենք» ասելը բավական չէ: Հարկավոր է սիրել խաղաղությունը և հանուն դրա պատրաստ լինել

գոհաբերությունների: Մենք պետք է կենտրոնանանք ոչ միայն պատերազմի բացասական հեռացման, այլ խաղաղության, որպես երևույթի, դրական հաստատման վրա: Մի քանի տարի առաջ մահացավ հայտնի մի գրող, որի թղթերի միջից գտնվեց ապագա պատմությունների համար առաջարկվող սյուժեների ցանկը, որոնցից մեկն ընդգծում էր հետևյալը. «Լայնորեն բաժանված ընտանիքը ժառանգում է մի տուն, որտեղ նրանք պետք է միասին ապրեն»: Սա մարդկության նոր մեծ խնդիրն է: Մենք ժառանգել ենք մեծ տուն, մեծ «աշխարհի տուն», որտեղ պետք է միասին ապրենք՝ սև ու սպիտակ, արևելք-ցիներ և արևմուտքցիներ, հեթանոսներ և հրեաներ, կաթոլիկներ և բողոքականներ, մուսուլմաններ և հինդուիստներ, գաղափարներով, մշակույթով և շահերով անհիմն բաժանված, բայց նաև այլևս իրարից անկախ ու անջատ ապրել չկարողանալով, պետք է ինչ-որ կերպ սովորենք ապրել միմյանց հետ այս մեկ մեծ աշխարհում (<https://www.nobelprize.org/prizes/peace/1964/king/lecture/>):

- Ես մտահոգված եմ ավելի լավ աշխարհի համար: Ես մտահոգված եմ արդարադատությամբ: Ինձ անհանգստացնում է եղբայրությունը: Ինձ մտահոգում է ճշմարտությունը: Եվ երբ մեկին դա մտահոգում է, նա երբեք չի կարող պաշտպանել բռնությունը: Որովհետև բռնության միջոցով կարող ես սպանել մարդասպանին, բայց չես կարող սպանել կամ վերացնել սպանություն: Բռնության միջոցով դուք կարող եք սպանել ստախոսին, բայց չեք կարող հաստատել ճշմարտությունը: Բռնության միջոցով դուք կարող եք սպանել ատողին, բայց դուք չեք կարող սպանել ատելությունը բռնության միջոցով: Խավարը չի կարող հանգցնել խավարը, միայն լույսը կարող է դա անել (<https://bit.ly/3wnC80e>):
- Եվ չնայած, որ մենք խոչընդոտների ենք հանդիպում այսօր և կհանդիպենք նրանց վաղը, ես, միևնույնն է, երազանք ունեմ: Այդ երազանքը խորապես կապված է ամերիկյան երազանքի հետ: Ես երազում եմ, որ մի օր այս ազգը կհարթվի և կապրի իր սկզբունքի իրական իմաստով. «Մենք ամենապարզորոշ կերպով կարծում ենք, որ բոլոր մարդիկ հավասար են արարված»:
- Ես երազում եմ, որ մի օր Ջորջիայի կարմիր բլուրներին նախ-

կին ստրուկների որդիները և նախկին ստրկատերերի որդիները կկարողանան միասին նստել եղբայրական սեղանի շուրջ: Ես երազում եմ նրա մասին, որ կգա մի օր և նույնիսկ Միսիսիպի նահանգը, որ կիզում է տապից և ճնշումից, կվերածվի ազատության և արդարության օազիսի: Ես երազում եմ, որ կգա մի օր, երբ իմ չորս երեխաները կապրեն մի երկրում, որտեղ նրանք կդատվեն ոչ թե մաշկի գույնով, այլ իրենց անհատական հատկանիշների համապատասխանությամբ:

- Ես այսօր երազում եմ: Ես այսօր երազում եմ, որ մի օր Ալաբամայում իր չարախինդ ռասիստներով և նահանգապետով, որի շուրթերից դուրս են գալիս չեղյալ հայտարարելու և միջամտության բառեր, մի գեղեցիկ օր, հենց Ալաբամայում, փոքրիկ սև տղաները և աղջիկները սպիտակ տղաների ու աղջիկների հետ որպես քույր և եղբայր իրար ձեռք կբռնեն:⁶⁵

Քննարկեք այս մեջբերումներ, ինդրեք աշակերտներին արտահայտվել կարծիքներով: Առաջարկեք, որ աշակերտները դիտարկեն այս մեջբերումները նաև պատմության ենթատեքստում:

● **Առաջադրանք 6 - «Խաղաղությունից իրավունք - իրավունքից խաղաղություն»**

Այս վարժության նպատակն է զարգացնել նրանց վերլուծական մտածողությունը, ինչպես նաև խթանել Էսսեններ գրելու հմտությունները: Նպատակահարմար է, որ առաջադրանքը կատարվի տանը, իսկ դասարանում ըստ ցանկության ընթերցվեն Էսսենները ու ծավալվեն քննարկումներ դրանց վերաբերյալ:

- Միջազգային մարդասիրական իրավունքներն ու դրանց սահմանումը անցելուց հետո, քննարկումներ սկսեք փաստաթղթի բովանդակության մասին, հանձնարարեք, որ դասի ընթացքում կամ տանը երեխաները փորձեն համապատասխան որոշակի հոդվածներ կարդալ ու դասարանում բացատրել իրենց

ընկերներին այդ հոդվածներն ու դրանց նպատակը (<https://bit.ly/3qkIKtB>, օգտվել հետևյալ փաստաթղթերից՝ <https://bit.ly/3JtOpUj>) - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԻՆՎԱԾ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԶՈՂԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԺՆԵՎԻ 1949 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻՆ ԿԻՑԺՆԵՎԻ 1977 ԹՎԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ արձանագրությունը (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1)):

- Քննարկումից հետո կարող եք աշակերտներին հանձնարարել էսսե՝ «Իրավունքներն ու խաղաղությունը» թեմայով: Խնդրեք, որ այն արտացոլի նրանց կարծիքը իրավունքների ու խաղաղության կապի, դրանց փոխադեցության վերաբերյալ՝ ներառելով որոշակի ամօրյա օրինակներ:

● Առաջադրանք 7- «Կարիք ու ցանկություն»

Այս վարժության նպատակն է քննարկել մարդու հիմնական կարիքները, և դրանց սահմանափակումները պատերազմների և զինված բախումների ժամանակ, ինչպես նաև դրանց կարևորությունը թե՛ անհատի, թե՛ խմբի կյանքում: Ցույց տվեք աշակերտներին ներքոնշյալ ցուցակը, հարցրեք թե ամօրյայում ինչքան կարևոր են այս կարիքները: Քննարկումն ավարտելուց հետո, նույն հարցը տվեք՝ ավելացնելով պատերազմական իրավիճակներում արտահայտությունը: Քննարկումը շարունակեք այն հարցով, թե ո՞րքանով են դրանք արդիական մնում հակամարտությունների ընթացքում, ո՞րոնք են առավել կարևորվում, որոնք՝ ոչ: Խնդրեք, որպեսզի այս ցուցակը դասակարգեն ամօրյա կյանքի դեպքում և պատերազմական իրավիճակներում:

Ֆիզիոլոգիական կարիքներ	Հոգեբանական կարիքներ
Սնունդ	Մշակույթ
Հագուստ	Հարգանք
Առողջություն	Անվտանգություն
Կացարան/տուն	Ինքնաարտահայտում
Զուր	Ինքնառեալիզացում
	Աշխատանք
	Ճանաչում
	Զվարճանք
	Ընկերություն
	Մասնակցություն
	Կրթություն
	Սեր
	Անկախություն

● **Առաջադրանք 8 - «խաղաղության» իրավունքի իմ բանաձևը**

Այս վարժությունը կարող է ունենալ երկու տարբեր դրսևորումներ: Դասարանում ուսումնասիրեք խաղաղության իրավունքը, բաժանեք սովորողներին խմբերի, հանձնարարեք, որպեսզի իրենք կազմեն խաղաղության իրավունքն ամրագրող փաստաթուղթ, այդ փաստաթուղթը կարող է ունենալ հետևյալ բաժինները.

- Ի՞նչ այլ իրավունքներ կարող ենք ներառվել խաղաղության իրավունքի այս փաստաթղթում,
- Ի՞նչ վտանգներ են սպառնում այս իրավունքի չիրացմանը,
- Ի՞նչ պետք է անեն պետությունները, ինչպես նաև մարդիկ որպեսզի իրացվի այս իրավունքը,
- Ի՞նչ պատիժ է ստանալու այս իրավունքը խախտողը:

Ուշադիր եղեք, որ պատիժը բռնության կոչեր չներառի:

Մյուս տարբերակում այս վարժությունը կարող եք կատարել, մինչև խաղաղության իրավունք թեմային անցնելը:

● **Վարժություն 9 - «Անցիր շրջանը»⁶⁶**

Անհրաժեշտ է վարժությունը կատարել դատարկ ու մեծ տարածքում, այդ իսկ պատճառով առաջարկում ենք, որ աշակերտներին տանք բաց տարածք, որտեղ կկարողանան հանգիստ շարժվել:

Քայլերի հաջորդականություն

Սովորողներին բաժանեք 6-8 հոգանոց խմբերի: Խնդրեք խմբերին, որպեսզի իրենց միջից ընտրեն 2 մասնակից՝ «դիտորդ» և «օտարական» (որը կլինի խմբից դուրս):

- Այդ խմբերի անդամներին ասեք ուսերով հևարավորինս մոտ կանգնել՝ որպեսզի նրանց մեջ բաց տարածք չմնա:
- Բացատրեք, որ «դրսի մարդը» պետք է փորձի մտնել շրջանակի մեջ, մինչդեռ նրանք, ովքեր ձևավորվում են շրջանակը պետք է փորձեն նրանց դուրս պահել:
- Դիտորդին ասեք, որ նշումներ կատարի թե՛ «դրսի մարդու» կողմից, թե՛ խմբի կողմից օգտագործվող ռազմավարությունների վերաբերյալ:

Երկու-երեք րոպե հետո, և անկախ նրանից՝ կարողացել են շրջանակը ստեղծել «դրսի» անդամը սկսում է փորձերը, հաջողության դեպքում մեկ այլ անդամ է դառնում «դրսի» անդամ: Գործունեությունն ավարտվում է, երբ խմբի բոլոր անդամները, ովքեր ցանկանում են շարունակել հոգնած լինեն ու չկարողանան փակ պահել շրջանակը:

66. Force the circle!, <https://bit.ly/3fF5i7V>.

Կարող եք ամփոփել հետևյալ հարցերով.

- Իրական կյանքի իրավիճակներում ե՞րբ եք սիրում Ձեզ զգալ «օտար» կամ փոքրամասնություն, և ե՞րբ եք գնահատում խմբի կամ մեծամասնության մաս զգալը:
- Կոնֆլիկտային իրավիճակում ո՞րն է Ձեր ընկալմամբ ուժեղ ու թույլ խմբի բնութագիրը:
- Հասարակության մեջ կամայական շրջանակը կարող է ունենալ արտոնություններ, փող, իշխանություն, աշխատանք կամ բնակարան: Ի՞նչ ռազմավարություններ են օգտագործում կողմնակի անձինք այս ռեսուրսներից օգտվելու համար:
- Ինչպե՞ս են շրջանակի ներսում գտնվողները պահպանում իրենց կարգավիճակը:
- Ինչպե՞ս են փոխվում այդ հարաբերությունները կոնֆլիկտում: Արդյո՞ք դրանք նույնն են մնում: Դրանք ամրապնդվո՞ւմ են: Թուլանո՞ւմ են:
- Ի՞նչ կերպ են փոխվում դաշինքները:

● Վարժություն 10 - «Քննարկում. հետազոտական աշխատանք»



«... ի վերջո մեր անվտանգության ապահովման լավագույն ճանապարհն ու շարունակական խաղաղության ապահովման լավագույն ռազմավարությունը՝ ժողովրդավարության զարգացումն է: Ժողովրդավար երկրները/ժողովրդավարությունները իրար վրա չեն հարձակվում» (Բիլ Բլինթոն, 1994)⁶⁷

Բիլ Բլինթոնը՝ ԱՄՆ 42-րդ նախագահը, այս խոսքերը ասել է 1994թվ. հունվարի 25-ին, Կոնգրեսում իր ելույթի ժամանակ: Քննարկեք այս արտահայտությունը դասարանում, ժողովրդավարությունն ու դրա արժեքները ուսումնասիրելուց հետո:

Քննարկումը կարող եք իրականացնել երկու տարբերակով.

1. Սովորողներին բաժանել երկու խմբի՝ առաջարկելով կազմակերպել բանավեճ կողմ ու դեմ կարծիքներով: Հարցը կարող եք բարձրացնել հետևյալ կերպ՝ «արդյո՞ք ժողովրդավարության հասնելը և դրա արժեքների ապահովումը կբերի շարունակական խաղաղության»:
2. Սովորողներին բաժանել մի քանի խմբերի՝ հանձնարարելով նրանց մինչև հաջորդ դասը կատարել հետազոտություն այնպիսի երկրների վերաբերյալ, որոնք ժողովրդավարական են կամ չեն, ունեցել են կոնֆլիկտ իրենց հարևան երկրների հետ և կարողացել են հասնել իրական խաղաղության դրա լուծման արդյունքում:

Երկրների ցանկ

- **Ուգբեկստան և Ղազախստան**⁶⁸ - 2002-ին նրանք խաղաղ համաձայնագիր են կնքել /ստորագրել: Չնայած որ այս երկրները ժողովրդավարական չեն, բայց հարկավոր է թողնել, որ երեխաները կատարեն փոքրիկ հետազոտություններ՝ գալով սեփական եզրակացությունների:
- **Կանադա և Ղանիա**⁶⁹ - կոնֆլիկտ Հանսի կղզու վերաբերյալ:
- **Հարավային և Հյուսիսային Կորեաների** միջև կոնֆլիկտը:
- **Էգեյան կոնֆլիկտ**՝ Թուրքիա-Հունաստան:

Հանձնարարեք, որ սովորողները ուսումնասիրեն ոչ միայն կոնֆլիկտը, այլ նաև այդ երկրների ներկայիս ժողովրդավարական վիճակը:

● Վարժություն 11 - (Քննարկում)

Քննարկման նպատակը՝ թեմայի սկզբում կամ ավարտին ամփոփել ժողովրդավարության ու խաղաղության կապը: Անդրադարձնալ միջավայրային կամ երկրի խնդիրներին՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին:

Կարևոր է քննարկել նաև հանդուրժողականության և խաղաղության փոխհարաբերությունները ՀՀ-ի ու համայնքի ներսում ու դրանից դուրս:

Ո՞րն եք համարում աշխարհում բռնության ամենավտանգավոր ձևերը:

Ձեր համայնքը տառապո՞ւմ է բռնությունից կամ հանդուրժողականության պակասից: Ի՞նչ ձևերով: Առկա են ոչ բռնի այլընտրանքներ:

Ի՞նչ եք կարծում, որո՞նք են աշխարհում մարդու իրավունքների ամենալուրջ խախտումները: Գիտե՞ք արդյոք դրանք շտկելու ջանքերի մասին: Ձեր համայնքում կա՞ն մարդու իրավունքների խնդիրներ: Ինչպե՞ս են դրանք արտահայտվում և լուծվում:

Որո՞նք են ժողովրդավարության ամենալուրջ խոչընդոտները: Ինչպե՞ս կարող է համաշխարհային հանրությունը լուծել այս խոչընդոտներից որևէ մեկին: Ինչպե՞ս կարող է ձեր սեփական համայնքը մասնակցել այդ գործընթացին:

1. Զինված Ուժերում Մարդու Իրավունքների և Հիմնարար Ազատությունների Վերաբերյալ Դասընթացի Կազմակերպման և Անցկացման, Ուսումնական Ձեռնարկ, <https://bit.ly/3utTR3B>:
2. Ի՞նչ է Միջազգային մարդասիրական իրավունքը, <https://bit.ly/36c0Cib>
3. Հանսի կղզի, <https://bit.ly/3lvwJqw>:
4. Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագիր, <https://bit.ly/3wkIXRi>:
5. Մարտին Լյութեր Քինգ. Ես երազանք ունեմ, <https://bit.ly/36es1Qt>:
6. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, <https://bit.ly/3ilwXFS>:
7. «Ուղեցույց», Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ - Եվրոպայի խորհուրդ, 2001:
8. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, <https://bit.ly/363sKEI>:
9. 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով Հայաստան տեղափոխված երեխաների կրթության և պաշտպանվածության կարիքների գնահատման զեկույց, <https://bit.ly/3N7z2DA>:
10. A Border Conflict Resolved?Without War, <https://bit.ly/3KDcBov>.
11. Adolescents As Peacebuilders Toolkit, <https://uni.cf/3CSjRco>.
12. Anti-discrimination, <https://bit.ly/34gB5mH>.
13. Christoph Zürcher, The Oxford Handbook of Peacebuilding, Statebuilding, and Peace Formation, <https://bit.ly/33flhPs>.
14. Compass, "What are human rights?", <https://bit.ly/3lsr7wS>.
15. Core Democratic Values Defined, <https://bit.ly/34tklDj>.
16. Dan Reiter, Is Democracy a Cause of Peace?, <https://bit.ly/3Fe8HOR>.

17. Demanding Diversity: Tolerance is Not Enough, <https://bit.ly/3CUGYTQ>.
18. Democracy, <https://bit.ly/3wfZLHX>.
19. Democratic Peace Theory, <https://bit.ly/3GjXr52>.
20. Difference Between Equality and Justice, <https://bit.ly/3f7W50Z>.
21. Democracy Score, <https://bit.ly/3tjHsjc>.
22. Force the circle!, <https://bit.ly/3fF5l7V>.
23. Human Dignity and Human Rights, <https://bit.ly/3loRJPx>.
24. Human Rights Library, <https://bit.ly/3qh2gWs>.
25. Liberty, <https://bit.ly/3F3VUyx>.
26. Patriotism, Stanford Encyclopedia of Philosophy, <https://stanford.io/3Hljen0>.
27. Peacekeeping, <https://bit.ly/3FNtrgE>.
28. Peacebuilding and human rights - an agenda for democratic transformation, <https://bit.ly/31LBHjm>.
29. Politics for Beginners, 2018, <https://bit.ly/3JrlmAL>.
30. Saman Suttam, <https://bit.ly/3JkmKVU>.
31. T-Kit 12: Youth transforming conflict, <https://bit.ly/36pj1YB>.
32. The three key components of the Human right to peace, <https://bit.ly/3rJlaUW>.
33. Understanding equality, <https://bit.ly/32Ty7ni>.
34. UN on the Right to Peace and Right of Peoples to Peace, <https://bit.ly/3lpJJxo>.
35. What are human rights?, <https://uni.cf/3lq8Tfv>.
36. What Is Freedom?, <https://bit.ly/3JnSWrC>.
37. 1994 State Of The Union Address, Jan. 25, 1994.

၂၀၂၀



ԹԵՄԱ 3.1

Քաղաքականությունը՝ որպես խաղաղաշինության գործիք



● Նպատակ

Ծանոթացնել քաղաքականություն հասկացությանը, բացատրել յուրաքանչյուր քաղաքացու դերը քաղաքականության մեջ և ներկայացնել վերջինիս կապը խաղաղաշինության հետ:

.....

Մարդու գոյության ընթացքում ամեն ինչ՝ կենցաղը, սովորույթները, կանոնները, օրենքները միշտ փոխվել են ժամանակին համընթաց և արձագանքել են տարբեր ժամանակաշրջանների մարտահրավերներին: Հասարակության զարգացման մի շարք միտումների հատման արդյունքում, որոնք միտված էին տարբեր խնդիրների լուծմանը և մարդկային շահի բավարարմանը, ձևավորվել է քաղաքականությունը (politics): Պետությունների ձևավորմանը զուգընթաց ակնհայտ դարձավ, որ սոցիալական հարաբերությունները կարգավորող համակարգերը՝ կրոն, ավանդույթներ, սովորույթներ և այլն, արդեն անարդյունավետ են դարձել, քանի որ հասարակության մեջ բազմակարծությունը շատ ավելի մեծ էր: Առաջ եկավ քաղաքականությունը,

որը տարբեր գաղափարների շուրջ ձևավորված խմբերի շահերը պիտի իրականացնեն: Վերոնշյալից ելնելով՝ քաղաքականությունը կարելի է սահմանել որպես խմբերի նպատակային փոխգործակցության արդյունքում ձևավորված հարաբերությունների ամբողջություն, կապված իրենց հասարակական նշանակության շահերի իրականացման նպատակով պետական իշխանության ձեռքբերման, պահպանման և օգտագործման հետ:

Առօրյա կյանքում քաղաքականությունն ասելով հասկանում ենք առավելագույնիս հասնելու արվեստ, որը կարող է արտահայտվել, ինչպես մարդկային հարաբերություններում, այնպես էլ միջխմբային և միջպետական մակարդակներում:

Մ. Վեբերը քաղաքականության մասին խոսելիս նշում է, որ այն մարդկային գործունեության հատուկ ձև է, որտեղ ամեն մարդ ունի իր դերը: Նա մարդկանց քաղաքականության մեջ բաժանում է երեք խմբի՝

- իրավիճակային քաղաքական գործիչներ (օրինակ՝ մենք բոլորս, որպես շարքային ընտրողներ մասնակցում ենք ընտրական գործընթացներին)
- Համատեղմամբ քաղաքական գործիչներ (կուսակցական ակտիվիստներ, որոնց համար քաղաքականությունը գլխավոր գործունեության ոլորտ է)
- Արհեստավարժ քաղաքական գործիչներ (պետական գործիչներ և պաշտոնյաներ, ազատված կուսակցական գործառնողներ և այլք):

Ինստիտուցիոնալ տեսանկյունից ժամանակակից քաղաքականությունն ունի հետևյալ բաղադրիչները՝

1. լիդերության/առաջնորդության ինստիտուտներ
2. իշխանության օրգաններ
3. կարգավորման կորմեր և կանոններ, որոնք միավորվում են քաղաքական գործողությունների ընդհանուր համակարգի մեջ:

Ըստ այդմ, ժամանակակից քաղաքականության ընկալումը ենթադրում է, որ մեզնից յուրաքանչյուրն իր հստակ դերն ունի քաղաքականության մեջ և կարող է այն ձևավորել և իր ազդեցությունն ունենալ: Պետությունը որպես սուվերեն մարմին ստեղծել է այդ բոլոր մեխանիզմները, որ յուրաքանչյուր քաղաքացի կարողանա իր մասնակցությունն ունենալ:

Առաջին ամենակարևոր մեխանիզմը յուրաքանչյուր քաղաքացու՝ իշխանության ձևավորման մեջ մասնակցության (ընտրություններ) մեխանիզմն է: Այսպիսով՝ մեզնից յուրաքանչյուրն ունի հավասարազոր ձայնի իրավունք իշխանության ձևավորման համար, որն այդ քվեով ստանում է մանդատ իր քաղաքականությունը (policy) վարելու բոլոր հիմնական ուղղություններով, դրանք են՝

1. Տնտեսությունը/տնտեսական քաղաքականությունը,
2. Կրթություն/կրթական քաղաքականությունը,
3. Արտաքին քաղաքականությունը,
4. Սոցիալական քաղաքականությունը,
5. Իրավունքը,
6. Մշակույթը - կարծրատիպերի և օրինակների «գաղտնի» աջակցում, պահպանում:

Բացի ընտրություններից մասնակցելը, քաղաքացին բազմաթիվ այլ միջոցներ և տարբերակներ ունի քաղաքականության վրա ազդեցություն ունենալու, որոնցից են՝

- Խաղաղ հանրահավաքները/բողոքի ակցիաները,
- Հացադուլները,
- Խնդիրների հանրայնացումը,
- Կապի հաստատումը իշխանության տեղական ներկայացուցիչների հետ:

Վերոնշյալից ելնելով՝ կարող ենք հստակ տարանջատել, որ քաղաքացին ներպետական իրադարձություններին մասնակցության երկու

հիմնական ձև ունի՝ քաղաքական և քաղաքացիական: Քաղաքական և քաղաքացիական մասնակցության ձևերի միջև տարբերությունը հստակ հասկանալու համար իրականացնելու ենք համեմատական վերլուծություն՝ դիտարկելով ընտրություններին մասնակցությունը որպես քաղաքական մասնակցության ձև և խաղաղ հանրահավաքների իրավունքը որպես քաղաքացիական մասնակցության ձև:

Նշենք, որ ընտրություններին մասնակցությունը համարվում է քաղաքացու՝ քաղաքական գործընթացներին մասնակցելու հիմնական միջոց: Յուրաքանչյուր քաղաքացի այդպիսով կարողանում է մասնակցել իր երկրում քաղաքական իշխանության ձևավորման գործընթացին՝ ընդ որում այդ մասնակցությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ընտրել առաջադրված ուժերին կամ թեկնածուներին, այլև մերժել բոլորին (ընտրատեղամաս գնալ և թերթիկը անվավեր դարձնել), որը ևս քաղաքական գործընթացում հստակ տեսակետի արտահայտման ձև է: Խաղաղ հանրահավաքների իրավունքը Սահմանադրությամբ և միջազգային իրավունքով քաղաքացիներին տալիս է հնարավորություն խաղաղ ձևով իրենց անհամաձայնությունը հայտնել իշխանության այս կամ այն որոշման կամ գործողությունների նկատմամբ: Այս պարագայում ցանկացած հարցի շուրջ մենք կարող ենք մեր քաղաքացիական դժգոհությունը բարձրացնել և լսելի դառնալ: Պատմության ընթացքում խաղաղ հանրահավաքների լավագույն օրինակներ կան: Դրանցից մեկը 2018թ-ին Հայաստանում այսպես կոչված թավշյա հեղափոխությունն էր, որի ժամանակ բացառապես խաղաղ գործողությունների շնորհիվ ժողովուրդը կարողացավ իշխանափոխություն իրականացնել:



Առաջարկվում է այստեղ կիրառել խմբային առաջադրանք 1-ը (տե՛ս առաջադրանքների բաժնում):

Խաղաղաշինությունից խոսելիս շատ կարևոր է հասկանալ վերջինիս դերը քաղաքականության տիրույթում: Խաղաղաշինության սահմանմանը և բացատրությանը արդեն ծանոթացել եք ձեռնարկի նախորդ բաժիններում: Այս հատվածում առավելապես կխոսենք, թե ինչ

կարևորություն ունի խաղաղաշինական քաղաքականությունը, և այն ինչպես է ազդում հասարակության վրա:

Խաղաղաշինական քաղաքականությունը այն գործողությունների և քայլերի համախումբն է, որ տարածվում է հասարակության բոլոր շերտերի վրա և բոլոր շերտերի հետ առանձին աշխատանք է ենթադրում: Այն կապում է այս գաղափարի կրողներին, այս գաղափարի հիմքով գործողություններ իրականացնող կազմակերպություններին և քաղաքականություն մշակող մարմիններին (Կառավարություն, պետական մարմիններ): Խաղաղաշինական քաղաքականության նպատակը ոչ միայն կոնֆլիկտի լուծումն է, այլև այնպիսի հասարակության, միջավայրի, ենթակառուցվածքների ստեղծումը, որն ի վիճակի կլինի ավելի լավ պահպանել խաղաղությունը:



** Էյնշտեյնի ինստիտուտը առանձնացնում է ոչ բռնի քաղաքացիական պայքարի 198 մեթոդ, որոնց կարող եք ծանոթանալ՝ [այստեղ](#):*

ԹԵՄԱ 3.2

Պետություն և պետական քաղաքականություն



● Նպատակ

Սահմանել պետություն հասկացությունը, բացատրել պետական քաղաքականությունը և վերջինիս մեջ խաղաղաշինության դերը:

.....

Պետության ձևն ունի երեք հիմնական բաղադրիչ՝ կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև և պետական (քաղաքական) վարչակարգի ձև: Պետության կառավարման ձևը պետական իշխանության բարձրագույն մարմինների կազմակերպումն է: Ըստ այդ տարբերությունների և յուրահատկությունների, աշխարհում կան պետության կառավարման մի քանի ձև ունեցող պետությունների տիպեր՝ միապետություններ և հանրապետություններ: Միապետությունները կարող են լինել բացարձակ, սահմանադրական, դուալիստական, խորհրդարանական տիպի: Հանրապետությունները իրենց հերթին կարող են լինել նախագահական, խորհրդարանական, կիսանախագահական տիպի:

Պետության կառավարման ձևերը գործնականում լավ պատկերաց-
նելու համար առաջարկվում է կազմակերպել դերային խաղ (տե՛ս Դե-
րային խաղ 1):

Պետության ձևի մյուս բաղադրիչը՝ կառուցվածքի ձևը, սահմանում
է պետության տարածքային կազմակերպման ձևը: Ըստ տարածքա-
յին կազմակերպման՝ պետությունները լինում են ունիտար, դաշնա-
յին և համադաշնային:

Պետական ձևի վերջին բաղադրիչը վարչակարգի ձևն է: Ըստ Ներ-
սեսյանցի՝ «Պետական (քաղաքական) վարչակարգի ձևը պետական
իշխանության իրականացման իրավական կարգի բնույթն է, հատ-
կությունը և որակը: Այստեղ հիմնականն այն հարցերն են, թե ինչպես,
ինչ եղանակով և ինչ ձևով է իրականացվում պետական իշխանու-
թյունը... Պետական (քաղաքական) վարչակարգն իր էությամբ միշտ էլ
պետական-իրավական վարչակարգն է, պետության գործունեության
որոշակի իրավական կարգը, պետության իշխանության իրականաց-
ման այս կամ այն իրավական ձևերը, ընթացակարգերը, հնարքները,
եղանակները և մեթոդներն է: Պետական (քաղաքական) վարչակար-
գի տարբեր ձևերը, իրենց էությամբ լինելով իրավական, միաժամա-
նակ իրարից տարբերվում են իրենց իրավական զարգացածության
մակարդակով և աստիճանով՝ համապատասխան իրավական կար-
գի իշխանության իրականացման իրավական հնարքների ու ընթա-
ցակարգերի բնույթով ու որակով: Նման իրավական չափանիշներին
համապատասխան՝ պետական (քաղաքական) վարչակարգերը բա-
ժանվում են երկու խմբի՝ ազատականների և ավտորիտարների»:

Պետական քաղաքականությունն առավել բովանդակային պատկե-
րացնելու համար առաջարկվում է մի քանի պատմական իրավիճակ
ներկայացնել և քննարկել սովորողների հետ (տե՛ս իրավիճակ առա-
ջին, երկրորդ երրորդ):

Հայաստանի Հանրապետությունը ըստ պետական կառավարման
ձևի խորհրդարանական հանրապետություն է: Դա նշանակում է, որ
Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է
ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրութ-

յունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Կառավարությունը

Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է:

Կառավարությունն իր ներկայացրած ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, իրականացնում է պետության ղեկավարումը Կառավարության և վերջինիս ստորաբաժանումների՝ նախարարությունների միջոցով: Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Ըստ այդմ, այն կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

Խորհրդարանական մեծամասնության ընտրած թեկնածուին Հանրապետության նախագահը նշանակում է վարչապետ: Փոխվարչապետները և նախարարները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ:

Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը:

Ազգային ժողովը

Ազգային ժողովը ժողովրդի օրենսդիր մարմինն է: Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառնություններ:

Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից: Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով:

Դատական իշխանությունը

Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքների համապատասխան: Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

ՀՀ-ն օրենքի գերակայությամբ ժողովրդավարական երկիր է, որտեղ օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: ՀՀ-ում օրենքները ստեղծվում կամ հաստատվում են ՀՀ օրենսդիր իշխանության՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից կամ համաժողովրդական հանրաքվեով (Սահմանադրություն): Այս օրենքները կարգավորում են կարևոր նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունները:

Ազգային ժողովի կողմից ցանկացած օրենք ընդունելու համար այն անցնում է երեք հիմնական փուլ՝

- Օրենսդրական նախաձեռնության փուլ
- Օրինագծի քննարկման և ընդունման փուլ
- Ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ:

Առաջին՝ օրենսդրական նախաձեռնողականության փուլում օրենքի փոփոխություն առաջարկող կողմը ներկայացնում է նախաձեռնությունը, որի վերաբերյալ ԱԺ համապատասխան հանձնաժողովը կարծիք/ եզրակացություն է տալիս: Եթե այդ եզրակացությունը դրա-

կան Է, ապա գործընթացում հաջորդում Է մյուս՝ օրենքի քննարկման և ընդունման փուլը, որի ընթացքում օրինագիծը անցնում Է թե՛ ԱԺ, թե՛ հանրային քննարկումների փուլերով, որոնք իրական հնարավորություն են տալիս շահագրգիռ տարբեր կողմերի հանդես գալ իրենց առաջարկներով և դիտարկումներով: Այդ դիտարկումների, առաջարկների հիման վրա օրինագիծը ևս մեկ անգամ լրամշակվում Է, որից հետո նոր ստորագրվում և հրապարակվում Է: Եթե նախորդ երկու փուլերը հաջողությամբ չի անցնում, օրենքը չի ընդունվում:

- ՀՀ-ում օրենքները երեք տեսակի են՝
- Սահմանադրություն
- Օրենսգիրք
- Ընթացիկ օրենքներ:

Սահմանադրությունը ՀՀ մայր օրենքն Է: Այն կարգավորում Է բոլոր ոլորտները և սահմանում իրավական բոլոր սկզբունքները, որոնց հիմքով արդեն ստեղծվում են օրենսգրքերը և ընթացիկ օրենքները:

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն Է: Այս կառավարման ձևին մենք անցում ենք կատարել նախագահական կառավարման ձևից՝ ըստ այդմ փոփոխությունների ենթարկելով կառավարման համակարգում տարբեր բաղադրիչներ:



Որպեսզի աշակերտները կարողանան հստակ օրինակներով ու բաղադրատարրերով ցույց տալ, թե որոնք են նախագահական և խորհրդարանական Հայաստանների տարբերությունները, առաջարկվում Է դասարանում կազմակերպել հետևյալ աշխատանքը (տե՛ս համեմատական վերլուծություն առաջին):

ԹԵՄԱ 3.3

Պետություն և մշակույթ



● Նպատակ

Ծանոթացնել մշակույթ հասկացությանը, վերջինիս տեսակներին, հարգանք և պատասխանատվություն ձևավորել դեպի մշակույթը, ցույց տալ վերջիններիս կապը խաղաղաշինության հետ:

.....

Մշակույթը մարդու և հասարակության պատմական զարգացման որոշակի մակարդակն է, որն արտահայտվում է նյութական, առարկայական դրսևորմամբ (ճարտարապետություն, արվեստի ստեղծագործություններ, մեքենաներ և այլն), ինչպես նաև մարդկային սուբյեկտիվ կարողություններով և ընդունակություններով (գիտելիք, մասնագիտական հմտություններ, աշխարհայացք և այլն): Տարածված է անգլիացի մշակույթի պատմաբան Էդուարդ Թայլորի սահմանումը, ըստ որի՝ մշակույթը կամ քաղաքակրթությունը ամբողջանում են գիտելիքներից, հավատալիքներից, արվեստից, բարոյականությունից, օրենքներից, սովորություններից, որը յուրացվում է մարդու կողմից: Կարճ ասած՝ մշակույթը մարդկային գործունեության արդյունք է:

Մշակույթ բառն առաջացել է լատիներեն *colere* տերմինից (թարգմանաբար՝ հողի մշակում, կուլտիվացիա, ինչը փաստում է, որ մշակույթն իր ծագմամբ կապված է մարդու արտադրական, տնտեսական գործունեության հետ), որը միջնադարում դեռևս օգտագործվում էր գյուղատնտեսության մեջ տեխնոլոգիական զարգացածությունը և նորամուծությունները ցույց տալու համար: 18-րդ դարից բառն արդեն օգտագործվում էր մարդկանց բնութագրելու համար: Այն մարդիկ, ովքեր աչքի էին ընկնում իրենց քաղաքակիրթ վարքով, սկսեցին կոչվել «կուլտուրական»՝ քաղաքակիրթ:

Մշակույթ հասկացությունը բաժանվում է երկու հիմնական մեծ խմբերի՝ հոգևոր և նյութական: Նյութական մշակույթն ընդգրկում է ողջ նյութական գործունեությունը և դրա արդյունքները (աշխատանքի գործիքներ, կացարան, հագուստ, կապի միջոցներ, տեխնոլոգիաներ, ճարտարապետություն և այլն), հոգևոր մշակույթը՝ գիտակցության, հոգևոր արտադրության ոլորտը (ճանաչողություն, արվեստ, բարոյականություն, դաստիարակություն, լուսավորություն, հասարակական գիտակցության ձևեր), առասպելաբանություն, փիլիսոփայություն, գրականություն (բանավոր և գրավոր): Կարևոր է նշել, որ մշակույթի նյութական ու հոգևոր բաժանումները միանշանակ չեն, քանի որ անխզելիորեն կապված են ու փոխլրացնում են միմյանց: Օրինակ՝ մեր գիտելիքները վերաբերում են հոգևոր արժեքներին, բայց համակարգիչները, հեռուստացույցները, որ ստեղծվել են այդ գիտելիքների հիման վրա, նյութական են: Գիտությունը համարվում է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգություն:

Պետություն և մշակույթ ենթաթեման ուսումնասիրելիս առաջարկում ենք նախևառաջ կիրառել այնպիսի մեթոդներ, որ սովորողների մոտ տեսական նյութը ամրապնդվի:

Այս թեմայի ուսուցման ավարտին կարևոր է, որ սովորողները կարողանան նկարագրել, թե ինչ է՝

- Մշակույթը,
- Ազգային մշակույթը,
- Նյութական մշակույթը,
- Հոգևոր և ոչ նյութական մշակույթը:

Որպեսզի վերոնշյալ հասկացությունների մասին երեխայի մոտ համապարփակ պատկերացում ստեղծվի, առաջարկում ենք մշակույթ հասկացությունը բացատրելիս օգտագործել այսբերգի կամ ծառի մեթոդը (տե՛ս գործնական աշխատանք երկրորդ):

Ոչ նյութական մշակույթը առավել խորքային ընկալելու համար առաջարկվում է կիրառել գործնական աշխատանք երրորդը:

Շատ հաճախ մշակույթ հասկացությունն օգտագործվում է ազգերի, Էթնիկ խմբերի, պատմական տարբեր ժամանակաշրջանների առանձնահատկությունները և զարգացման մակարդակը բնութագրելու համար:

Պետությունը՝ որպես միջազգային սուբյեկտ, ժառանգություն է ստացել իր մշակույթը պատմական տարբեր ժամանակաշրջաններից կամ իր տարածքում գտնվող տարբեր Էթնիկ կամ այլ խմբերից, ունի հստակ պարտավորություն հարգանք ցուցաբերելու այդ արժեքների նկատմամբ, պահպանելու դրանք և ստեղծելու արդյունավետ միջավայր տարբեր մշակույթների դրսևորման և զարգացման, ստեղծագործականությունն ապահովելու համար:

Աշխարհի գրեթե բոլոր պետություններն ունեն իրենց ներքին հստակ օրենսդրական կարգավորումները, որոնք սահմանում են քաղաքացիների՝ խոսքի, ստեղծագործության ազատության, հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ստեղծագործական գործընթացին պետության կողմից չմիջամտելու, ինչպես նաև մշակութային հարստության պահպանման, տարածման և զարգացման համար իրավական երաշխիքներ:

Մյուս կողմից, մշակույթը աշխարհում փափուկ ուժի դրսևորման ամենաեական օրինակներից է: Մշակույթը պետության հիմնական բաղադրիչներից է, որն առանձնացնում է վերջինիս մյուսներից, ընդգծում է վերջինիս եզակիությունը: Միաժամանակ, մշակույթը վերազգային և վերպետական արժեք է, որի միջոցով ցանկացած պետություն կարող է իր համար Էական արժեքները տարածել միջազգային հարթակներում: Այժմ աշխարհում կան արդեն «մշակութային պատերազմ», «մշակութային խաղաղաշինություն» տերմինները, որոնք հստակ ընդգծում են մշակույթի միջոցով հարաբերությունների

սրման և, ընդհակառակը, հարաբերությունների կարգավորման հնարավորությունները:

Ազգային մշակույթ հասկացությունը բնորոշում է աշխարհում ազգի կամ Էթնիկ խմբի առանձնահատուկ մշակութային համակարգը, որը հատուկ է միայն իրենց: Իր բնույթով ազգային մշակույթը Էթնիկական մշակույթի զարգացման բարձրագույն ձևն է: Ազգային մշակույթ հասկացությունը քննարկելիս կոչտարկենք հայկական ազգային մշակույթի օրինակը:

Հայ ժողովուրդը՝ որպես առանձին ազգ, ունի պատմական տարբեր ժամանակաշրջաններում ձևավորած իր ազգային մշակույթը, որը բնութագրվում է սոցիալական համերաշխության վրա հիմնված յուրահատուկ մշակութային համակարգի առկայությամբ և հայերի համակեցության փորձով: Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական անցյալը՝ մեր ազգային մշակույթը այժմ ձևավորվում և զարգանում է ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանից դուրս՝ հայկական Սփյուռքում:

Հայկական ազգային մշակույթը ժամանակային շրջափուլերով բաժանվում է մի քանի խոշոր մասերի՝

- Ուրարտական մշակույթ,
- Հելլենիստական մշակույթ,
- Քրիստոնեության ընդունում և քրիստոնեական մշակույթի ձևավորում,
- Գրերի գյուտ և միջնադարյան պատմագրություն, գրականություն,
- Կիլիկյան մշակույթ, գրքարվեստ,
- Նոր շրջանի հայկական մշակույթ,
- Խորհրդային շրջանի մշակութային Հայաստան,
- Նորագույն շրջանի մշակույթ (ՀՀ, Արցախ, Սփյուռք):

Երբ խոսում ենք ազգային մշակույթից և մշակութային ժառանգությունից, շատ կարևոր է ընդգծել հոգևոր մշակույթի և ժառան-

գության դերը հայկական մշակույթում: Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական անցյալը՝ քրիստոնեության ընդունումից հետո այն մեր ժողովրդի համար ազգապահպանության ամենակարևոր դերն է ստանձնել և պետականություն չունենալու պայմաններում իր շուրջն է համախմբել ազգին: Մեր նյութական մշակութային ժառանգության ահռելի մասն են կազմում եկեղեցիները, վանական համալիրներն ու վանքերը, որոնք ծառայել են ժողովրդին որպես կրթօջախներ, պաշտպանական ամրոցներ, կրոնական կենտրոններ, թաքստոցներ և այլն: Մյուս կողմից պետք է նշենք, որ քրիստոնեության ընդունմամբ Հայաստանում ոչնչացվել են բոլոր ոչ քրիստոնեական նյութական մշակութային կոթողները և արժեքները: Դա է պատճառը, որ հեթանոսական Հայաստանից այս պահին կանգուն է մնացել միայն Գառնու տաճարը: Ինչ վերաբերում է մշակութային ոչ նյութական արժեքներին՝ տոներին, ծեսերին, գրականությանը, այս հարցում մեր ազգը ավելի ճկուն է գտնվել՝ դրանք վերածելով քրիստոնեական տոների, ծեսերի, գրականության և այսպիսով, ապահովել է վերջիններիս պահպանությունը:



Ազգային մշակույթը արժևորելու, ինչպես նաև սեփական համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորելու համար առաջարկում ենք իրականացնել դաշտային աշխատանք (տե՛ս դաշտային աշխատանք առաջին):





● Խմբային աշխատանք առաջին

Քաղաքականության թեման ուսումնասիրելիս առաջարկվում է կազմակերպել դերային խաղ: Որպեսզի երեխաները գործնականում կարողանան պատկերացնել քաղաքականության մեջ սովորական քաղաքացու և մյուս ներգրավված խմբերի դերերը և գործիքները, որոնցով կարող են ազդեցություն գործել, դերային աշխատանքի ժամանակ ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի: Ամեն խումբ մեկ հասարակական խմբի դեր է ստանձնում՝ իրավիճակային քաղաքական գործիչներ, համատեղմամբ քաղաքական գործիչներ և արհեստավարժ քաղաքական գործիչներ: Ամեն խումբ ստանձնում է իր դերը, որից հետո ուսուցիչը որևէ իրավիճակ է ներկայացնում: Իրավիճակը կարող է լինել այսպիսին՝ ՀՀ-ում քննարկվում է շահագործել Ամուլսարի հանքը: Ինչպե՞ս են գործելու վերոնշյալ խմբերը, ի՞նչ քայլեր են ձեռնարկելու, ինչպիսի՞ լիազորություններ ունեն: Խմբերը քննարկում են, ապա ամեն խմբից ընտրում են մեկ ներկայացուցիչ, ով կներկայացնի խմբի աշխատանքը և այն քայլերը, թե ինչպես կարձագանքեն իրենք հետևյալ իրավիճակում:

● Դերային խաղ առաջին

Պետության կառավարման ձևերը գործնականում լավ պատկերացնելու համար առաջարկվում է կազմակերպել դերային խաղ: Աշակերտների ցանկությամբ ուսուցիչը իրենց ներկա կամ նախկին առաջնորդների դերեր է տալիս: Այդ դերերը պետք է ներառեն թե՛ բռնապետերի, թե՛ կայսրերի, թե՛ ժողովրդավար ղեկավարների: Ուսուցիչը կարող է աշակերտներին տալ Անգելա Մերկելի, Ադոլֆ Հիտլերի, Բարաք Օբամայի, Տիգրան Մեծի, Կիմ Զեն Ինի, Վուդրո Վիլսոնի,

Նիկոլ Փաշինյանի դերերը: Աշակերտները դերերը ստանձնելուց հետո պետք է ուսումնասիրեն «իրենց» կառավարման ժամանակաշրջանը, երկրի կառավարման ձևը, դրա յուրահատկությունները և հաջորդ դասին այդ դերում հանդես գալով՝ ներկայացնեն իրավիճակը:

Իրավիճակ առաջին

15-րդ դարում Օսմանյան կայսրությունում Մեհմեդ Երկրորդը մշակել էր «եղբայրասպանության մասին» օրենքը, ըստ որի այն սուլթանը, որը գալիս էր իշխանության, հրամայում էր սպանել իր բոլոր եղբայրներին հետագա ապստամբություններից և գահի համար քաղաքացիական պատերազմներից խուսափելու համար: Դա վերածվել էր ծիսակարգի, սուլթանի հրամանով սպանվում էին անգամ նորածին երեխաները: Մեհմեդի այս օրենքը 150 տարվա ընթացքում հանգեցրեց արքայական ընտանիքի ավելի քան 80 անդամների սպանությանը:

Քննարկման հարցեր՝

1. Այս քաղաքականությունը արդյո՞ք արդարացված էր:
2. Ըստ Ձեզ՝ այն ավելի ուժեղացնո՞ւմ էր սուլթանի իշխանությունը, թե՞ թուլացնում:

Իրավիճակ երկրորդ

Պապ թագավորի կառավարման ժամանակահատվածում վերջինս ձեռնամուխ եղավ որոշ բարեփոխումների: Քրիստոնեության ընդունումից հետո Պապ թագավորը հստակ տեսնում էր, որ քրիստոնեությունը պաշտոնապես Ե ընդունվել, բայց վերջինս դեռ չի մտել ժողովրդի առօրյա: Դրան զուգահեռ եկեղեցին կամ դրան կից կառույցները, որոնք պետական գանձարանի լուրջ մաս էին կազմում, անիմաստ էին, քանի որ նրանց նպատակը քրիստոնեական բարոյագիտության տարածումն էր: Փոխարենը նրանց պատճառով տարածվում էր ծուլությունը, կուսանոցների պատճառով կրճատվում էր բնակչության աճը: Այս ամենով պայմանավորված Պապի որոշմամբ կրճատվում են եկեղեցուն շնորհված հողերը և դրանք տրամադրվում են զինվորականներին: Պապը սկսում է փակել աղքատանոցները, կուսա-

նոցները, որոնցում գտնվող կանանց պարտադրում է ամուսնանալ, իսկ տղամարդկանց՝ ծառայության անցնել զորքում: Նա վերացնում է նաև տասանորդի և պտղի հարկերը, որոնք ռամիկներից տրվում էին եկեղեցուն: Չուգահեռ կրճատվեց նաև հոգևորականների թիվը:

Քննարկման հարցեր՝

1. Այս քաղաքականությունը արդյո՞ք արդարացված էր և արդյո՞ք պետականամետ էր:
2. Ըստ քեզ՝ հասարակության կողմից այս քաղաքականությունը առավելապես ողջունվե՞ց, թե՞ չէ:

Իրավիճակ երրորդ

Խաղաղաշինական քաղաքականությունից խոսելիս առաջարկվում է քննարկել Արցախյան կոնֆլիկտը:

Մինչև Արցախյան երկրորդ պատերազմը ՀՀ-ում իշխանափոխությունից հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ սկսում է Արցախյան բանակցությունները նոր Էջից: Միաժամանակ, նա շեշտում էր, որ շատ կարևոր է ժողովուրդներին խաղաղության պատրաստելու գործընթացը և շեշտում, որ առանց դրա կոնֆլիկտի խաղաղ լուծում ակնկալել հնարավոր չէ:

Դրան զուգահեռ նույնատիպ հայտարարություններով հանդես էր գալիս նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը: Չնայած այդ հայտարարություններին, Ադրբեջանի դպրոցներում և մանկապարտեզներում շարունակվում էր հայատյաց կրթական քաղաքականություն իրականացվել, երգերում «սպանենք ու մորթենք հայերին» էին շարունակում երգել:

Քննարկման հարցեր՝

1. Արդյո՞ք երկրի ղեկավարների մակարդակով արվող հայտարարությունները խաղաղաշինական քաղաքականություն կարող ենք համարել:
2. Եթե Հայաստանում հակաադրբեջանական քարոզչություն չի իրականացվում, արդյո՞ք դա խաղաղաշինական քաղաքականության ենթաբաղադրիչ կարող ենք համարել:

Վարժությունն իրականացնելու համար օգտակար խորհուրդներ

Քննարկման հարցերը հնչեցնելիս կարևոր է, որ սովորողները վերլուծեն թե՛ ՀՀ վարչապետի, թե՛ Ադրբեջանի նախագահի հռետորիկան ու կարողանան ցույց տալ, որ երկուսի դեպքում էլ խաղաղաշինությունը միայն հայտարարությունների մակարդակում է եղել և ոչ պետական քաղաքականության: Առաջարկվում է, որ ուսուցիչը հուշող հարցեր ձևակերպի, որ ի վերջո սովորողներն այս մտահանգումներն ունենան:

● **Համեմատական վերլուծություն առաջին**

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն է: Այս կառավարման ձևին մենք անցում ենք կատարել նախագահական կառավարման ձևից՝ ըստ այդմ փոփոխությունների ենթարկելով կառավարման համակարգում տարբեր բաղադրիչներ:

Որպեսզի աշակերտները կարողանան հստակ օրինակներով ու բաղադրատարրերով ցույց տալ, թե որոնք են նախագահական և խորհրդարանական Հայաստանների տարբերությունները, առաջարկվում է դասարանում կազմակերպել հետևյալ գործնական աշխատանքը:

Գրատախտակին պատկերում ենք ներքոբերյալ աղյուսակը:

	Նախագահական կառավարման ձևը ՀՀ-ում	խորհրդարանական կառավարման ձևը ՀՀ-ում
Օրենսդիր իշխանություն		
Գործադիր իշխանություն		
Դատական իշխանություն		

Աղյուսակը գծելուց հետո սովորողների հետ փորձեք լրացնել այն՝ մտազրոհ կազմակերպելով: Կարևոր է, որ սովորողները ամեն մարմնի կամ լիազորության մասին խոսելիս նշեն, թե նախագահական կառավարման ձևի ժամանակ այն ինչպես էր աշխատում, խորհրդարանական կառավարման ձևի ժամանակ այն ինչպես է աշխատում:

Մտազրոհ անելուց հետո կարևոր է ամփոփել աղյուսակը և ևս մեկ անգամ բացատրել երեխաներին տարբերությունները:

Վարժությունն իրականացնելու համար օգտակար խորհուրդներ

- Խոսեք նախագահի լիազորությունների մասին նախագահական և խորհրդարանական Հայաստանում,
- Խոսեք ԱԺ-ի լիազորությունների մասին,
- Վարչապետի/ նախագահի ընտրությունների մասին:

● Գործնական աշխատանք երկրորդ

Ծառը կարող եք համեմատել մշակույթի հետ՝ շեշտադրելով, որ մշակույթը իր երկու հիմնական բաղադրիչներով՝ նյութական և ոչ նյութական, շատ նման է ծառի: Նյութական հատվածը այն հատվածն է, որը տեսնում եմք երևում է, իսկ ոչ նյութականը՝ ծառի արմատն է, որը չնայած չի երևում անզեն աչքով, բայց ընկած է նյութական մշակույթի հիմքում:

Շատ կարևոր է տեսական նյութը բացատրելիս, հասկացությունները ներկայացնելիս նյութը բազմաթիվ օրինակներով համալրել, որ այն ավելի պարզանա երեխաների համար: Մասնավորապես, երեխաներին ծանոթացրեք համաշխարհային մշակույթի նմուշների հետ, ցույց տվեք, պատմեք հետաքրքիր պատմություններ դրանց մասին: Շառլ Ազնավուրը, Գրիգոր Նարեկացին լավ օրինակներ են բացատրելու ազգային մշակույթը և ազգային մշակույթի ներդրումը համաշխարհային մշակույթում:

● Գործնական աշխատանք երրորդ

Դասարանում ձևավորում եք չորս-հինգ հոգանոց թիմեր, որից հետո տնային հանձնարարությունն եք ձևակերպում:

Երեխաները պիտի փորձեն համեմատել իրենց գյուղի կամ քաղաքի և հարևան գյուղի կամ քաղաքի բնակչությանը: Հետազոտությունն իրականացնելիս պետք է պատասխանեն հետևյալ հարցերին՝

- Արդյո՞ք կա բարբառային նմանություն կամ տարբերություն,
- Արդյո՞ք կա ֆիզիկական նմանություն կամ տարբերություն (մաշկի գույն, հասակ, դիմագծեր):
- Արդյո՞ք կա վարքագծային նմանություն կամ տարբերություն,
- Արդյո՞ք կա սովորության նմանություն կամ տարբերություն (այլ սովորույթներ ունեն, տոները այլ կերպ են նշում և այլն),
- Արդյո՞ք կա զարգացածության, քաղաքակիրթ լինելու նմանություն կամ տարբերություն:

Շատ կարևոր է, որ բոլոր ենթակետերի մասին խոսելիս թիմը նշի՝ ո՞րն է այդ տարբերությունների կամ նմանությունների պատճառը, ակունքները:

Ամեն թիմ կատարում է իր հետազոտությունը և հետո ամբողջ դասարանին ներկայացնում:

Այս գործնական աշխատանքի նպատակն է երեխաների մեջ ամրապնդել ոչ նյութական մշակույթ հասկացությունը, զարգացնել վերջիններս վերլուծելու, տրամաբանելու, համեմատելու հմտությունները, միաժամանակ, աշխատանքի շնորհիվ երեխաները ավելի լավ կճանաչեն իրենց համայնքը և իրենք հարևաններին:

● Դաշտային աշխատանք առաջին

Մեկ դաս առաջարկում ենք նվիրել դաշտային աշխատանքին: Ուսուցչի ուղեկցությամբ դասարանը գնում է նախապես ընտրված իրենց համայնքի (գյուղ, քաղաք) որևէ մշակութային վայր և շաբաթօրյակ են իրականացնում մաքրելով ողջ տարածքը: Մաքրությունը կարող է վերաբերել, ինչպես տարածքից աղբը հավաքելուն, տարածքը կարգի բերելուն, բույսերը խնամելուն, այնպես էլ, եթե օրինակ հուշակոթող է, այն զգուշությամբ լվանալուն, եթե վրան ավելորդ գրված բաներ կան, դրանք զգուշորեն մաքրելուն:

Միաժամանակ, տեղում առավել մանրամասն առաջարկում ենք ծանոթանալ այդ վայրի պատմությանը, նշանակությանը և դերին:

Այս գործնական աշխատանքը երեխաների մեջ պատասխանատվության զգացում կձևավորի իր գյուղի, քաղաքի մշակութային վայրերի նկատմամբ, երեխաները կկարևորեն այդ վայրի դերը իրենց համայնքում, երկրում, ապա ամբողջ մոլորակում:

● Հարցեր ?

1. Ի՞նչպես կբացատրեն քաղաքականությունը քո բառերով: Ըստ քեզ՝ պատմության ընթացքում այն ի՞նչ փոփոխություններ է կրել և ինչպիսի՞ էական բաղադրիչներ է պարունակում:
2. Ո՞րն է քո դերը քաղաքականության մեջ: Դու, որպես քաղաքացի, ի՞նչ դեր կարող ես խաղալ:
3. Կարո՞ղ ես օրինակով բացատրել կրթական, սոցիալական և արդյունաբերական ոլորտների փոխկապվածությունը և փոխկախվածությունը քաղաքականության տեսանկյունից:
4. Դու ինչպիսի՞ քայլեր կձեռնարկեիր, որը դիտարկվեր որպես խաղաղաշինական քաղաքականություն:
5. Որո՞նք են պետության ձևերը, ՀՀ-ն ինչպիսի՞ պետություն է:

6. Օրինակներով ցույց տուր ՀՀ-ում նախագահական և խորհրդարանական կառավարման ձևերի տարբերությունները և նմանությունները:
7. Երբևէ մասնակցե՞լ ես խաղաղ հանրահավաքների, որո՞նք են հանրահավաքների ժամանակ քաղաքացիների նպատակները:
8. Որո՞նք են ՀՀ պետական իշխանության ճյուղերը, կարո՞ղ ես ներկայացնել, թե նրանք զուգահեռ ինչպես են գործում:
9. Քո բառերով բացատրիր, թե ինչ ես հասկանում մշակույթ ասելով, փորձիր տարբերակել նյութական և ոչ նյութական մշակույթները:
10. Ըստ քեզ՝ ո՞րն է քո և պետության դերը մշակույթի ստեղծման և պահպանման գործում:

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության պաշտոնական կայքէջ <https://www.gov.am/am/gov-system/>
2. «Քաղաքականություն» երևույթի Էությունը, Էվոլյուցիան և ժամանակակից մեկնաբանությունները <http://geopolitics.am/archives/13368>
3. «Պետության և իրավունքի տեսություն (մաս առաջին)», Դասախոսություններ, հեղ.՝ պրոֆեսոր Ա. Վաղարշյան, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, Էջ 138-141
4. 'The Ottoman Empire's Life-or-Death Race", Mike Dash, March 22, 2012 <https://www.smithsonianmag.com/history/the-ottoman-empires-life-or-death-race-164064882/>
5. Հայկական սովետական հանրագիտարան, խմբագիր՝ Վիկտոր Համբարժումյան, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1981, Էջ 656
6. ՀՀ օրենքը «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Ընդունված Է 2002 թվականի նոյեմբերի 20-ին <https://escs.am/am/news/4276>
7. Ձևավորող գնահատման 9 հնար «ԿՀՆԱԿ» հիմնադրամ <https://kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html>
8. «Հայոց մշակույթ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹ. ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 21-ՐԴ ԴԱՐ» ՀՀ Արտաքին Գործերի Նախարարություն <https://www.mfa.am/hy/culture/>
9. «Մշակութաբանություն» Գագիկ Մելքումյան, Երևան 2001 http://lib.y-su.am/disciplines_bk/95364d4db4ec9053175429122c8ee3c9.pdf

Հետգրություն



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում» հասարակական կազմակերպությունը (Frontline Youth Network) երիտասարդական հարթակ է, որը միավորում և հզորացնում է մարզաբնակ և սահմանաբնակ երիտասարդներին հանուն կայուն խաղաղության:

Մեր առաքելությունն է համախմբել և հզորացնել երիտասարդներին՝ ստեղծելով հնարավորություններ քաղաքական և սոցիալական կյանքում ներազդեցություն ունենալու համար:

Մեր արժեքներն են՝

- խաղաղություն
- իրավահավասարություն
- բնապահպանություն

Առավել մանրամասն այստեղ՝
www.frontlineyouth.net

«խաղաղաշինական կրթություն Տավուշում» ծրագիրը իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ ու «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության դերակատարները՝ որպես փոփոխությունների կրողներ Հարավային Կովկասում և Մոլդովայում» ծրագրի շահերի պաշտպանության արշավի ենթադրամաշնորհի շրջանակում:

Ծրագրի նպատակն է խթանել խաղաղության վերաբերյալ երիտասարդների վերաբերմունքային և վարքագծային փոփոխությունը՝

- ինտեգրելով կրթական համակարգում կոնֆլիկտի խաղաղ հաղթահարման և խաղաղաշինության մասին որակյալ այլընտրանքային բովանդակություն՝ երիտասարդներին տրամադրելով կոնֆլիկտի լուծման հիմնական հմտություններ և գործիքներ:
- փոխակերպելով առկա խաղաղության պատմույթը՝ դարձնելով այն ավելի որոշակի, մասնակցային, արդյունավետ՝ իրազեկելով և խրախուսելով երիտասարդների և կանանց ակտիվ ներգրավվածությանը խաղաղաշինական գործընթացներում:

Ակնկալվող ազդեցությունն է խաղաղաշինության վերաբերյալ գիտելիքահեն մոտեցման խրախուսում ուսուցիչների շրջանում, երիտասարդների մասնակցայնության խրախուսում խաղաղաշինության գործընթացներում, համագործակցություն դպրոցների հետ, խաղաղության վերաբերյալ զրույցների ավելացում:



Լիանան մասնագիտությամբ պատմաբան-մանկավարժ է: Ունի դասավանդման ավելի քան 10 տարվա փորձ: Երիտասարդական աշխատանքով զբաղվում է ավելի քան 5 տարի:

Մարիամը մասնագիտությամբ մշակութային մարդաբան է: Նեղ մասնագիտական հետաքրքրություններն են գեղեցիկության հիմնահարցերը, քաղաքի մարդաբանությունը և կոնֆլիկտաբանությունը:



Լարիսան սովորել է լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, այնուհետև կրթությունը շարունակել է Սիեռայի համալսարանում համաշխարհային կառավարում, միջմշակութային հարաբերություններ և խաղաղաշինության գործընթացի կառավարում:

Գոհարիկն ունի մագիստրոսի աստիճան մարդու իրավունքների և ժողովրդավարացման ոլորտում: Ներգրավված է տարբեր հետազոտական թիմերում ուսումնասիրելով կրթության իրավունքը, կրթության իրավունքահեն մոտեցումը, տարբեր մակարդակներում կրթության իրացմանն ուղղված իրավական հիմքերը, քաղաքականությունները:



Սերինեն ստացել է միջազգայնագետի, ապա մարդու իրավունքների և ժողովրդավարության մասնագետի որակավորում: Մագիստրոսական ծրագրի շրջանակում կրթություն է ստացել Նաև Բելառուսի պետական համալսարանում: Աշխատանքային փորձը ի սկզբանե կրթության ոլորտում է եղել:

Լուսինեն մասնագիտությամբ արևելագետ-եվրոպագետ է: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում է հետկոնֆլիկտային և խաղաղաշինական գործընթացների ուսումնասիրությունը: Հասարակական կազմակերպություններում խաղաղաշինական և գենդերային ուսումնասիրությունների ոլորտում:



